

Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻՒ Ը. — ԵՐՋԱՆ Ի. 1887 ՏԱՐԻ Ի. ՕԳՈՍՏՈՍ 31.

ԿՐՕՆԱԿԱՆ

ՄԱՓՈՒՐ ՀՈԳԻՆ ԱՍՏՈՒԱԾ ԿՏԵՍՆԻ։

ՄԻ ՄՏԱԾՈՒԹԻՒՆ ԱՌԱՒՕՏԸ.

Մաթ. ե. 8.

Ո՛վ եմ ես՝ երկրիս հողի կտորս, որ դու, ով իմ Աստուած, արժանի ես անուամբ քեզ ինձ տեսնել քեզ քո վաստկիդ մէջն։ Առաւօտուան ոսկեփայլ լուսի մէջ տեսնում եմ ես քո բեսիդ ճառագայթը, երկինքը պատմում է քո զօրութիւնն. երկիրս կանաչում է, մանչում է ծովը, և ինչ որ շունչ ունի, քեզ, Աստուածդ փառք է տալիս։ Եւ ես միայն սխալ

լռէի։ Երկնքի այն քարձրութիւնների մէջ ես աւելի պարզ կըտեսնեմ երկնաւոր Հօրս՝ պայծառացած, ու նորա ամենայն առաջը ծունր կըբերեմ։ Ո՛վ եմ ես, որ ուզում եմ ինձ Քո երանելիների հաշուի մէջ դնել, նորանց կարգը դասել ու ինձ Քեզ զաւակ ես ընտրել։

Միլիոնաւոր մարդիկ ամեն մի առաւօտ ինձ հետ մտնում են կենայ ժամերի նոր շրջանը, հաղարաւորներն օրուայ իրիկուանը չեն հասնիլ, նորա վերջաւորութիւնը չեն տեսնիլ. կարելի է, որ ես էլ նորա ընթացքի կիսում աշխարհիցս դուրս կը կանչուեմ, ինչու որ կը գայ վերջապէս այն անխախչելի րոպէն, որոյ մէջ իմ մահն կը տեսնեմ։

Ա՛յ ծերունի, մաղերդ ճերմակել են, օրիցդ օր այժդ պակասում է. դա մահուան առաջին փչումն է, որ քեզ վերայ փչում է հեռուից։ Այդպէս դեղնում է ամեռուան առաջին փչումից ծառերի տերևը։ — Ո՛վ մարդ, ով կիմն, առոյգ հասակի մէջ լինելով, ձեր այժն ու լոյսը ձեր վրան է, անթերի վայելումեք կեանքը, բայց նայեցէք ձեր եռևը. ձեզ նմաններից հազարաւորներ իրանց կեանքի ամառուան մէջ, իրանց գըլուխը քաշ արին ու ընկան՝ դաշտի հասած ու հնձուելու ցորենի նման՝ մահուան մանգասի տակ։ — Ո՛վ պատանի, ով ծաղկահասակ օրիորդ, դու հրճուելով վայելում ես կեանքիդ օրերը. քո կեանքիդ ընթացքը քեզ դեռ և ս մի ամբողջ յաւիտենականութիւն է երևում, որոյ ծայրը չես տեսնում։ Բայց գիտե՞ս երբ է քո վերջը։ Գիտե՞ս արդեօք, որ մահկանացու մեռնի քո կուրծքիդ մէջն արդէն ծածուկ քնած չէ։ Գիտե՞ս որպիսի աննշմարելի դիպուածներ քեզ քո կեանքի դադնիցը դուրս հանել կարող են։ Անցկացած ժամանակի գերեզմանների վերայ լաւ մտիկ տուր. նորանք ծածկում են պատանիների էլ, ծաղկահասակ օրիորդների էլ աճիւնները։

Երբ որ այդ բանը մտածում էք, ահ ու դողի մէջ էք ընկնում։ Կը ցանկայիք, որ ձեր գլխիցը հանէք այդ միտքը, — Այդպէս չպիտի անէք, որովհետև մեծ նշանակութիւն ունի այդ մտածութիւնը ամեն մի հոգւոյ համար։ Միշտ մտքնե-

բանդ պահեցեք ձեր մտքը, միշտ ձեր աչքի առաջն ունեցեք ձեր վերջն. ինչու որ իմաստուն մարդն ամեն բանի մեջ, ինչոր սկսում է, նորա վերջն է մտածում:

Ամեն մի մարդ, ամեն մի առաւօտ նոր նոր ծրագիրներ է կազմում իւր համար: Ամեն մի մարդ՝ իւր տան գործերի համար, իւր կառավարու քաղաքական գործերի համար նոր յաւտակագծեր է շինում: Ամեն մի մարդ նոր յոյսեր է կապում իւր համար այն բանին, որ այսօր պէտք է անի: Ամեն մի մարդ մտածքից անդ է կացնում նոր ակնկալութիւն ունենալ բարեպատեհ դիպուածներից՝ ու բարեբազդութեան հասնել, կարելի է, օրն իրիկուն գեռ չեզած: Կարծես օրուան հենց առաջին ժամն հետ ծնում են մեր սրտի մէջ շատ ու շատ ցանկութիւններ: Սակաւ է պատահում, որ մարդուս մտքերն այնպէս վառ կերպով գէպի ապագան գնան, ինչպէս որ արեգակին սարերի քամակից՝ նոր ծնածի նման՝ կրկին դուրս է գալիս:

Ու ինչո՞ւ համար է այս ամեն բանն: Ի՞նչ են վերջապէս այս բոլոր ծրագրերն ու յոյսերն, այս բոլոր յաւտակագծերն ու ակնկալութիւնները այս բոլոր ցանկութիւնները ու հաւատքները: Ուրիշ բան չեն, այլ միայն, այն, որ ամեն մի մարդ՝ իւր մտքովն ու որտով՝ ուզում է յայտնել քաղաքով չինելու համար իւր անհագած փափագը:

Սորա համար աշխատասէր տան հայրը հոգս է անում՝ ապագայի համար, որ իւր և իւրայնոց համար իւր կարողութիւնը մեծացնի, աւելացնի: Սորա համար մարդուս կինն ու տան մայրըն իւր անելու գործերի նախագիծ է շինում՝ որ տնտեսն կեանքը գեղեցկացնի: Սորա համար մարդուս՝ ձեռնարկութիւնները անոգ խելքը կրկնապատկում է իւր ջանքն, որ աւելի բարձր պատուի հասնի, աւելի լաւ անուն ունենայ: Սորա համար ծաղիկ հասակի մէջ եղոյնների երևակայութիւնը մեծ մեծ երազներ է տեսնում:

Այս ցանկութիւններն և ակնկալութիւնները նեղելի են, այս նոր ջանքն ու աշխատութիւնը՝ բարօրութիւնն աւելացնելու համար՝ գովելի է. բայց, երբ որ քո այս ցանկութիւններդ կատարուէին, բոլոր սրտովդ գոհ կըլինէիր արդեն:—Կարծո՞ւմ ես դուն, որ քո ցանկութիւններիդ հասած կլինէիր, երբ որ այս բոլոր ձգտումները բարօրութեանդ համար ձեռք բերած լինէիր:

այն ժամանակ բազդաւորութեան համար ունեցած ձկտումովդ անվրդով բազդաւորութեան և հառաջ կըլինէիր։

Աւա՛ղ, ո՛չ, ինքդ քեզ մի խաբէր։ Միտքդ բե՛ր, ինչպէս շատ անգամ սիրտդ տեղը չէր լինում, երբ որ ուտելիքի համար ոչ մի հոգս էլ չէիր ունենում. ու ինչպէս ուրախ էիր ընդհակառակն այն ժամանակն էլ, երբ որ այս ու այն բանը քեզ պակաս էր, ինչ որ այժմ ունիս։ Միտք արա՛, որ մի ցանկութեան կատարումն՝ իրաւ է, մարդուս ուրախացնում է, բայց երբէք երկար ժամանակ չէ քաշում այդ ուրախութիւնն, և թէ՝ ամեն անգամ, երբ որ մի փափագ լցվում է, նորա տեղը մի ուրիշն է ծնում. մոռացիր, որ քո ներքին բաւականութիւնդ շատ անգամ բոլորովին կախում չունէր արտաքին հանգամանքներից։

Եւ ի՞նչպէս կըլինէր, եթէ որ դու այսօր մի նպատակիդ հասնէիր, որոյ մասին աշխատում ես. եթէ որ քո սրտիդ ամենաճաշակ ցանկութիւնն կատարուէր, որ՝ քեզանից չոկ՝ ոչ մի մարդու յայտնի չէ՝ բացի Աստուածանից — և այն ժամանակ՝ քո նպատակին հասնելուդ հետ՝ մնացդ էլ վրա հասնէր։ — Ի՞նչ կըլինէր այն ժամանակ քո մտքումդ քեզ համար յղացած կատարելատիպն, որին ձգտում էիր, որոյ եռեւիյն էիր ընկնում տարիներով՝ անհանգիստ սրտով, անդուլ և անգադար բազձանքով՝ որ հասնես։ — մի երազ, մի ոտոշիր։

Սորա համար իմաստուն մարդու նման՝ միշտ վերջը մոռացիր այն բանի, որ սկսում ես անել։ — Դեռ և այ գոհ մի լինիր, որ, քո առաւօտուան ալօթքի ժամանակ, նոր մտադրութիւններ ես գլխումդ դրել քո արտաքին կեանքիդ համար — մոռացիր քո նէրչին կեանքը վրայ էլ, քո իսկական, տևողական բարօրութեանդ համար էլ, որ առաջ է գալիս միայն քո սրտիդ գեղեցկութիւնից։ Բրիսպոնեան իւր բոլոր գործերն Աստուծով սկսած է սկսի, ինչու որ ոչ մի ոսկի, ոչ մի ծիրանի, ոչ մի մեծութիւն չէ պարգևում մարդուս աշխարհիս վերայ այնպիսի մի անպղտոր, անապարա, և անապական բազդաւորութիւն, որ տալիս է Աստուած։ — Այ՛, իմացի՛ր որ շատ անգամ մեծ փառքի ու անուան տէր, մեր՝ երանի տուած մարդ ու սիրուն ուտում, մաշում է սրտմտութիւնն, իսկ հոգը թագաւորաղն իշխանի համար անգամ պատրաստում է փուշերից շինած անկողինք։ Թէև նո-

բանք երկրաւոր վառք աւելի ունին քան թէ դու քեզ համար կը ցանկայիր, բայց, կարելի է, պակաս են վայելում, քան թէ դու քո ունեցած միջոցներովդ, կամ թէ քաղաքական կեանքիդ ստորին աստիճանի մէջ ունիս ու վայելում ես։ Քո ձեռքդ է ու քեզանից է կախուած մարդկային կեանքի մէջ ամենաերջանիկ լինել.—ու կարող ես լինել. քո սիրտդ էլ այդ է պահանջում։

Քո ճաճուկ արած ալօթքիդ մէջ մոռացել ես արդեօք երկնաւոր Հօրդ ու աղաչել ես, որ քո միտքդ լուսաւորի, որպէս զի ձեռք բերել կարողանաս այն, ինչ որ գերագոյն բարին է երկնքում ու երկրիս վերայ, յաւիտենական կեանքի մէջ ու այս անցաւոր աշխարհում։ Մոռացել ես արդեօք խոնարհ սրբատուի քո փրկչիդ, քո աստուածային Ուսուցչիդ ու հարցրել ես, ինչպէս երբեմն հարուստ երիտասարդն հարցրեց նորան։ «Վարդապետ, ինչ բարի գործ անեմ, որ յաւիտենական կեանքը ժառանգեմ»։

Նրանից նորանոյ, որ տալոյ պէտք էին, ինչ- որ նորանից ապրուստ կը պահանջեն։ — Այսպէս է պատասխանում քեզ Փրկիչդ սուրբ ձայնն, և այս աստուածային խօսքերը գոյց են տալիս այն ճանապարհն, որ դու պէտք է ընտրես. գոյց են տալի քեզ երանելի կեանքը, հոգւոյ գէղեցիկ քաղին, որ դու այս ճանապարհի և ոչ մի ուրիշ ճանապարհի վրայ կը գտնես։

Մաքրել ես արդեօք քո խղճմտանքդ քեզ տանջող իւր ամեն յանդիմանութիւններից՝ քո արած վատ գործերիդ համար. մեռցրել ես արդեօք գիշերուան քնի հանգստութեանդ մէջ քո թշնամութիւնները, քո անկարգ վարմունքդ, քո նախանձդ։ Փցել ես արդեօք քո անցկացած ժամանակի անտակ ծովը քո մեղսական ցանկութիւնները, քո մոլի իղձերդ, քեզ անպատիւ անող սովորութիւնները։ Այժմ քո քնից զարթնել ու պարկած տեղիդ վեր ես կացել արդեօք՝ նորոգուած ու կազդուրուած՝ մի նոր ստեղծուած, աւելի լաւացած մարդու նման, որ կը համարձակի իրաւունք ունենալ մանկակից լինելու հոգիների գերագոյն երջանկութեան, որ Աստուած պարգեւել կարող է իւր հարատութեան լիութիւնից։

Ինչդ քեզ քննիր։—Մի թուլիր, քեզ զգոյշ անկնելդ մի թեթեւամտութիւնոյդ քո անելու օրական գործիդ մէջը։ Միայնու-

թեան մի քանի բոպէներ գոյ, ուր ոչ մի բան չէ կարող քեզ արգելք լինել քո վերայ մոածելուդ, ու հարցրու քեզ այնպէս, որպէս թէ այդ հարցումը քեզ եղած լինէր մեռելներին Դատաստի ըերանից. Ի՞նչ դրութեան մէջ է սիրտդ: Ի՞նչ սխալանքներ կան, որ դեռ ևս կեզտուում են նորան: Ի՞նչ և որ անմաքուր կրքերդ դեռ ևս արգելք են լինում քեզ, հեռացնում ու անջատում քո գերագոյն բարեդդ Հանելուց: Ի՞նչ բաներ կան, որ արել ես ու այժմ պատանդ ցաւում ես ու ափսոսում: Հոգւոյ որ գեղեցիկ յատկութիւն, որ առաքինութիւն դեռ ևս պակաս է քեզ, որ ևթէ ունենայիր, Աստուծոյ և մարդոց առաջ աւելի սիրելի կըլինեիր:

Պօղոս Տէ՞ր եղիր: — Ա՛խ, որչափ շա՜տ միտք կայ այս քիչ խօսքերի մէջ: — Դեռ ևս հերիք չէ, որ դու աչքի երևելու ոչ մի վատ բան չես անում, որ դու ոչ մի կոպիտ յանցանքով չես կեզտուում քեզ, որ դու արբեցող՝ կամ խաբեբայ, մատնիչ՝ կամ դրպարտիչ, անմեղութիւնը գլխիդ հանող՝ կամ սուտ երդում ուտող չես, — չէ՛, ոչ միայն ձեռքերդ կեզտոտուած պիտի չլինին արիւնի՝ կամ յափշտակութեան մէջ. պէտք էլ մաքուր պիտի լինի: ոչ մի վատ ՏպաՃոռնէ այդ սիրտը պիտի արատաւորած չլինի մեզքերով: Տէ՞ր պօղոս եղիր:

Բայց մի երևակայիր, որ դու արդէն ունիս երջանկացնող մաքուր սիրտ, ինչ որ դու ոչ մի մարդու գիտութեամբ վատութիւն չես արել, և մինչև անգամ մաքուձդ էլ մեկնին մի վատութիւն չես կամեցել: Ա՛խ, որպիսի ոգորմելի առաքինութիւն է այդ: Մեռելներն էլ այդպէս բարեպաշտ են. ինչու որ նորանք էլ ոչ մի վատութիւն չեն անում ոչ գործով և ոչ խօսքով:

Ո՛չ, դեռ ևս մաքուր սիրտ չունիս դու, քանի որ միտքդ են բերում թէ՝ քեզ նման մարդուն այնքան բարիք չես արել որչափ որ կարող էիր անել: Ո՛չ, քո սիրտդ մաքուր չէ, քանի որ առաքինութիւն ես քարոզում, ու գործով չես կատարում: Քո սիրտդ մաքուր չէ, քանի որ քո բան ու գործդ, բոլոր քո ջանքդ այն ուղղութիւնը չունին, որ քո գործունէութեան շրջանի մէջ ամենի բարերարը լինիս, որից հետ յարաբերութիւն ունիս, և որոնց որ դու կարող էիր օգտակար լինել ու բարիք անել: Քո սիրտդ դեռ ևս մաքուր չէ, քանի որ դու միտքդ բե-

րել չես կարողանում՝ որ դու այսօրուանում մէջ մի մարդ ու մի օգտակար ծառայութիւն չես տուել, մի ուրախութիւն չես պատճառել, թէև այդ տրած գործդ քո կողմից զոհողութեամբ էլ եղած լինէր։

Մի հանգիստ ինդ քեզ, որ դու աշխարհիս մեծ Փրկչի կատարեալ աշակերտն ես, նորա համար, որ ոչ մի մարդ հրապարակական անպարկեշտութեանդ համար քեզ մի յանդիմանութիւն անել չէ կարող։ Չէ որ արդէն շատ անգամ՝ մարդկանցից ծածուկ ու մենակ եղած ժամանակդ գրգռուած երեւակայութիւնդ անպարկեշտ պատկերներով է լցրել սիրտդ։ Մեռ՛ր այն, որ վատ մարդի ու վատ գործի մէջ մի շատ բարակ պատկայ մնայն, որն որ կատարած ցանկութիւնն՝ ամեն մի փարձութեան ժամանակ՝ շատ հեշտ է քանդում։ Միայն հաստատ կանոններ ունեցող կոյս սիրտն, միայն կուսի մէջ պղպատի պէս պնդացած սէրն Աստուած կըտեսնի։

Աստուած տեսնել։—Ոչ թէ մարմնոյ աչքով, այլ քո բոլոր հոգեվիզ, քո բոլոր ներքին մարդովդ կը տեսնես ու կը զգաս դու նորան քո մէջդ, ով մաքուր մարդ։ Մաքուր սրտով եղիր, և մեղութեան վերայ ատած յաղթութեանդ գիտակցութիւնն արդէն այս աշխարհիս մէջ քեզ դէնն անոյ կը կացնի այս կեանքիս պատահական դժբաղդութիւնների վրայով, ու մի երկինք կիջեցնի քո սրտիդ մէջ։ Մաքուր սրտով եղիր, և ամեն մի մտածմունքովդ՝ Աստուծոյ և յաւիտենական կեանքի վերայ՝ մի Աստուածային քոյ կը վառուի ու մանր կը գայ քո հոգեվիդ մէջ՝ իբրև մի ճառագայթ լուսադոյն աշխարհից։ Եթէ որ թագաւորներն իրանց գաւազանը քո ոտիդ տակը դնէին, աշխարհն էլ ոսկու գանձեր քեզ սեպհականութիւն տար,—դու չէիր փոխել այդ չնչին բանի համար քո ներքին գիտակցութեանդ երկինքը, քո սրտիդ աստուածային հանգստութիւնն, որ տուել ես Աստուծոյ օրհնութիւնով։ Ապաշ֊խարեցիր։ Մի քրիստոնեայ, ով Յիսուսին նուիրուած անձն, դու նորան կըտեսնես քո հոգեվիդ աչքերով, որ կրացուին Յիսուսի քեզ տուած ուսումովը։ Մարգարտ հոգին, աստիրնութեամբ մաքրուած՝ ու պայծառացած տուրբ կրօնով և դիպակնութեան կապերիցը արձակուած, աւելի պարզ է տեսնում, քան թէ այն հոգին որ հոգևէն մարմնոյ մէջն է ու հոգ դառնա-

լու բանի համար է ապրում։ Դու Յիսուսի հեռքովը մեն կըգաս Աստուծոյ առաջը, նորա մէջը կապրիս ու կշարժիս, և նա քիչ կերևի ամբողջ իւր աշխարհի ամէն հրաշալիքներուն մէջ։ Երբ որ ձմեռուան գիշերը քո սչքիդ առաջն է հանում անսահմանի երկնքի միլիոնաւոր աստղերն. երբ որ գարնան օրերը միլիոնաւոր ծաղիկներ քո ոտքիդ տակը փռում. երբ որ ամառուան մէջ օդը խառնվում է ու կայծակի բոցն երկնքի կամարն է ճեղքում. երբ որ աշնան մրրիկն, ահագին ձայներ հանելով, հարիւր տարուան կաղնիներուն մինչեցն է փչում — դու այդ բնական ամենայն վոփոխութիւններուն մէջ ոչ թէ աստղեր, ծաղիկներ, ոչ թէ բոց ու մրրիկ կտեսնես, ոչ, դու Աստուած կտեսնես, որ քեզ յայտնվում է ու քեզ հետ խոսել է ուզում։

Ասոտա՞ծ փեռնել։ — Այ՛ն, դու Նորան կտեսնես այն տեղ ուր որ մուքը պատում է մահկանացուի աչքը։ Նա իւր վուռքովը կպատահի քեզ քո կեանքիդ ընթացքում, երբ որ ուրիշ մահկանացուք շվոթուած կանգնած կմնան ու զարմացած կլինին անկեանք մի պատահմունքի հրաշալի զօրութեան վերայ, որոյ մնայն իրանց խելքն, իրանց հակառակելով, կշտաբերին, կմնլորուին։ Դու Նորան կճանաչես քո կեանքիդ տարօրինակ խառն հանգամանքների մէջ, որ վերջապէս միշտ բաղդաւոր կերպով կպարզուին՝ դու Նորան կտեսնես քո գլխիդ եկածներից դուրս գալու ճանապարհը չգտնելու բաւիլի մէջ, երբ որ Նորա հայրական Ձեռը ջերմ սիրով կբռնի քեզ, երբ որ իսկ ժամանակն է, որ նա քեզ հասնի ու անել դրութիւնիդ քեզ դուրս հանի։

Երբ որ, շատ քիչ անգամ պատահող մի հանդիսաւոր ժամում երկնային օրհնութիւնը կիջնի քո մի գործիդ վերայ, երբ որ մարդիկ, որ շատ անգամ մինչև քեզ ու քո անձդ էլ չէին ուզում ճանաչել, թող թէ քեզ դին դնել իրանց մտքիցն անցկացնելին, երբ որ մարդիկ, աստմեմ, վերջապէս խղճահարուած, սիրտները շարժած, կճանաչեն, քեզ կխոստովանին, ու կընդունեն քո արժանաւորութիւնդ. երբ որ ամենայն բարի մարդոց սէրը կընդմիջի երկարատև լռութիւնն ու կճանաչի քո ազնուամտութիւնդ, որ քանի ու քանի փորձերով անսուրանալի կերպով տեսնուել ու հաստատուել է. երբ որ այս աշխարհս վերայ քո եռևիդ կգայ Աստուծոյ օրհնութիւնն

ամեն տեղ, ուր որ գնաս, ինչ որ անելու լինիս, այն ժամանակ, ով քրիստոնյա, այն ժամանակ դու Աստուած կտեսնես, որ քեզ միշտ սիրում էր. Աստուած կտեսնես, որ քեզ համար մի յաղթանակ էր պատրաստում, որ այս աշխարհիս վերայ քեզ փառաւորցնելով, մխիթարի.—դու Նորան կտեսնես, Նորանով ազատ շունչ կքաշես, Նորա քեզ պարգևած հոգւոյ երջանկութիւնը քո սրտիդ մէջ առաւօրէն զեղուիլը կզգաս ու կիմանաս։

Դու Նորան կտեսնես նաև այն ժամանակ, երբ որ աստուածային անփոխոխելի վճիռը քեզ դէպի մութ անդունդը, դէպի գերեզմանդ կտանի։ Երբ որ անհաւատարիմ բաղդիդ հետ անհաւատարիմ բարեկամներդ էլ քեզնից իրանց երեսը շուռ կտան, երբ որ կեանքիդ ամեն մի շատ փոքրիկ ուրախութիւնն էլ քեզնից հեռու կփախչի ու քեզ ընկեր կմնայ միայն քո սրտիդ ցաւն,—այն ժամանակն էլ դու Աստուած կտեսնես, քո արտասուքներիդ մէջը կգտնես Նորան։ Քո անբաղդութիւններիդ կէս գիշերուայն՝ արեգական լուսի նման՝ կլուսաւորի Նա քո մինդ՝ ու դու կհասկանաս և կխոստովանիս, որ յաւիտեան Հաւատարիմն քեզ հաւատարիմ է։ Նա քեզ չի թողնիլ։

Ապրած փեանը։—Նորա հետ ծիսաւոր միացած, քո հոգիդ մ շուտ կպատահի Ադնո-ըէնն։ Նա կ յայտնուի քեզ քո հոգւոյդ մէջ, երբ որ դու ջերմեռանդութիւնով լցուած սրտովդ աղօթք անելով կխոնարհիս ու ծունր կգնես Նորա առաջն։ Ակյսպէս տեսաւ Ծիսաւս Նորան, երբ որ Գեթսեմանիում աղօթք անելով, մոքաւորում ու դէմ էր դնում իւր մարդկային բնութեանն. երբ որ Նա, խաչի վերայ մեռնելուս ժամանակն, աշխարհի փրկութեան համար էր աղօթք անում, և երբ որ Նա յաղթելով մահուան ու գերեզմանին, զարմանքից աղշած աշխարհի առաջն երևեցաւ։

Ու մի ժամանակ դու, կատարելութեանդ հասած քրիստոնեայ, աւետի պարզ կերպով Աստուածդ կտեսնես, երբ որ, մահուանդ ժամանակ, վախուտդ աչքերդ այլ ևս աշխարհս ճանաչել չեն կարողանալ, այն ժամանակ քեզ կբացուի երկինքը, երբ որ մութ աշխարհն քո առաջդ մի երազի պէս կանհետանայ։ Աստուածայինն այն ժամանակ քո մէջդ բոլորովին

իւր կապերից արձակուած ու ազատ կլինի, երբ որ այն, ինչ որ քո մարդկային հոգեղէն մասն է, վուռլ կգայ և իրրև կըզկլանք ցած կթափուի։

Այն ժամանակ, այո, այն ժամանակ, ով իմ անմահ հոգի, երբ որ քո կեանքիդ լաւագոյն ժամը կլսուի, որ աշխարհիս վերայ չեղած է տակաւին՝ ու երկինքումն՝ լռութիւն—այն ժամանակ դու Աստուած կտեսնես աւելի վառաւոր կերպով, քան թէ այս աշխարհումն կարող ես զգալ ու իմանալ։

Ես ինչ կտեսնեմ Ո՛ն անճառելի մեծ վայելչութեանդ մէջ, ո՛չ այժմ ինձ գիտէ ես աներևոյթ Աստուած, և այն ժամանակ միայն իմ վախճան, որ կատարուած կլինի, ինձ հրճուանքով ու հիացումով կլցնի։ Ես քեզ կտեսնեմ, երբ որ, երկրաւոր կապերից արձակուելով, իրրև մաքուր և պարզ հոգի՝ կվերադառնամ իմ իսկական հայրենիքս, որ աւելի որ դուրս եմ եկել։ Ինչու որ ես Ինձանից եմ առաջ գալի, յաւիտենականութեան ծոցից դուրս կանչեցիր, հանեցիր Դու ինձ հոգևորոյ կայծն, որ վերադառնում է դէպի բոլորովին լոյսդ։

Ես ինձ կտեսնեմ։—Ո՛չ, որպիսի՛ երջանկութիւն կայ արդէն այդ հրճուանքին արժանանալու յուսոյ մէջ։ Այն ժամանակ կիմանամ ես դէպի իմ գերագոյն կատարելութեանս նպատակը։ սիեզերքի գաղանիքների բոլը կվերցուի իմ աչքիս առաջն։ ու կլուսաւորեն ինձ ամեն կողմից երջանկութիւնները որոց համար այս աշխարհիս վերայ այնպիսի մի բառ չկայ, որով մեզ բացատրենք ու վ՛ անուն չկայ, որով հասկանայինք։—ես քեզ կտեսնեմ այն ժամանակ, երբ որ ինքս էլ քո շնորհօքդ աւելի կատարելութեան հասած կլինիմ։ ես, որ քո անսահմանի սիեզերքի մի մասն եմ, և որ ստեղծուած եմ քո փառքդ աւելի բարձր աստիճանին հասնելու։ Որպիսի՛ հրճուանքով քեզ երկրպագութիւն կանեմ, երբ որ երանելիների լուսոյ թագաւորութիւնը ինձ կպատուի ու պայծառացած արդարների ու անմահների և միլիոնաւոր աշխարհների երամների հետ Դու՝ Աստուած գովելով, ալէլուիա կասեմ բարձր ձայնով։ երբ որ երկնային յաւիտենական ճանապարհն դէպի միշտ անճառելի երջանկութիւններն պարզ ու պայծառ կերպով իմ առաջս բացուած կտեսնեմ։ երբ որ այն տեղ վերևումը կպատուեմ իմ հոգւոյս սիրելիներին, որոնք

որ ինձնից շուտ առաջ այնտեղ վերև թռան, գնացին ու Ջեզ տեսա՝ և

Բերանդ փակիր, ով մարդ, քո շատ յանդուգն խելքովդ, ու ծուռը դիր մանկական պարզ սրտով ամենակարող Հօրդ առաջը։—Դեռ և ս ապրում եմ ես այս աշխարհիս վերայ հազ դառնալու մարմնովս։—Ա՛հ, ինչ լի ես մինչև գայժմ։—Ինչպէս անարժան կերպով, ինչպէս սխալանքներով լի էի ես իմ կեանքիսամե՛ն օրերումն։ Ու ինչ եմ այժմ էլ։—ով Աստուած, ինչպէս կարող եմ ես համարձակ դէպի վեր Ջեզ մտիկ տալ, ինչպէս կարող եմ ես գերագոյն բանին յոյս ունենալ։ Միայն մաքուր սիրտ ունեցողներն են, որ Ջեզ կտեսանեն։ Ա՛հ թափանցի՛ իմ սրտիս մէջ Ձո սուրբ Հոգւոյդ զօրութիւնն, որ ես չդադարեմ ինձ մաքրելուց այն ամէն բանից, ինչ որ իմ մէջս մեզքից ազատ չէ ու անկատար է։ Մի՛ նորո՛, մի աւելի լաւ մարդ լինի՛մ ես իմ պանդխտութեանս, իմ այս անցաւոր աշխարհիս մէջ ա՛ճ ցնացնելուս ժամանակաւոր կեանքիս այս օրը, մաքուր հոգւով գնամ իմ կեանքիս ճանապարհին։ Երանի՛ ինձ, երբ որ ինքս ինձ յաղթեմ ու յաղթող դուրս գամ այս աշխարհիցս։ Երանի՛ ինձ, երբ որ ես էլ մի օր իմ մահուանս անկողինքի մէջ՝ արած յաղթութեանս վերայ՝ ուրախ սրտով կարողանամ ասել իմ սրտիս մօտիկ բարեկամներին՝ եղանի՛ նորանց, որ ծափ՝ ծափ ուռնին, ընդ՝ որ նորա Աստուած կ՚ուռնին։

(Թուղթ. գեղմանեղէնից) Դրիգոր Նարեկացոյ Աղաւիրեանց.

ՁԱՌ ԱՍԱՑԵԱԼ ՅԱՒՈՒՐ ՏՕՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՍՐԲՈՒՀԻՈՑ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ.

« Մէջ ընակ՚ի՚նք եղի՚ն ես ։

Արդեօք ինչ այս չէ՞ հասկացնում ու սորվեցնում մեզ, ով քրիստոնեայք, սուրբ եկեղեցւոյ ներկայ հանդէսը. հէնց նոյնը չէ՞ իսկապէս հաւատացնում մեզ Աստուածամօր վերափոխումն, նա ճշմարիտ երկրաւոր կեանքը քրիստոնէի կեանքի նպատակը չէ, այլ միայն ճանապարհը դէպի նպատակն։ Այստեղ մենք մեր տանը չենք, այլ մեր տուն գնալու ճանապարհի վրայ ենք։ այստեղ մենք ոչ թէ վայելչութիւններ ենք քաշում, այլ միայն աշխատում ենք։ ոչ թէ հանգստանում ենք, այլ իրեն

գինուորներ մեր գինուորութիւնն ենք անում. չենք հնձում, այլ ցանում ենք։ Այս աշխարհիս վերայ մենք պանդուխտ ենք և անցաւոր. Մեր բնակութիւնը երկնքումն է։

Ուրեմն, եթէ մեզ համար մեծ նշանակութիւն և օգուտ ունի գիւղնայը ճիշտ կերպով գինդնել մեր կենաց օրերին և խոհեմութեամբ օգուտ քաղել մեր ունեցած կեանքից, որ սերմանենք հնձելու համար, այսպէս և ոչ պակաս մեծ նշանակութիւն և օգուտ ունի այս գիւղից կազմել մեզ համար ուղիղ գաղափար այս աշխարհիս վերայ մեր ունեցած կեանքի մասին։

Ի՞նչ է մեր կեանքը։—Դէպի իւր հայրենիքը գնացող անցաւոր ճանապարհորդի պանդխտութեան տեղն է։ Այս ճշմարտութիւնն ինքն Աստուած յայտնել է մի ժամանակ Իսրայէլին. Ինձ է երկիր և դուք իմ առաջի պանդուխտներ ու հիւրեր էք։ Մենք մեր օրօրոցից սկսած, գնում ենք առանց կանգ առնելու, դէպի գերեզման, և անց ենք կացնում մեր մանկութեան, պատանեկութեան, երիտասարդութեան, այրութեան և ծերութեան տարիքը՝ ճանապարհորդների նման, որ անց են կենում առաջ կանաչազարդ և ծաղկաշատ դաշտերով, յետոյ՝ լեր կանաչ գոյնը՝ դեղինի փոխած, հասունացած բազմաբեղուն հասկերի միջով, վերջապէս ամպի ու տկլոր տեղերով։ Գնում ենք և հանդիպում զանազան դժուարութիւնների և անյարմարութիւնների՝ ճանապարհորդների նման, որոնք պատահում են ճանապարհում լեռնոտ, ճահճոտ և աւազոտ տեղերի։ Գնում ենք, ու քաշում տեսակ տեսակ դառնութիւններ, նեղութիւններ՝ ճանապարհորդների նման, որք ենթարկվում են՝ երբեմն քաղցի ու ծարաւի, երբեմն էլ՝ ցրտի և տօթի։ Երկար ժամանակ գնալով մեր ճանապարհն ինչն ու ինչն ենք յիշում արդեօք այդ միջոցին մեզ պատահած բաներից. շատ քան արդեօք գիտենք կեանքի մէջ մեր տեսածներից, որոնք զարմացնում էին մեզ, կամ մեր սիրտն դէպի իրանց քաշում մեզ գրաւելով, կամ վշտացնում էին ու տխրեցնում, մեր աչքին ծանր հարուած ու խոր վէրք դնելով։ Ամէն բան գալիս է մեր առաջն իբրև մի նոր բան, և ամեն բան մնում է մեր յետևն՝ իբրև մի հին բան. ամեն բան մեր առաջն է գալիս իբրև մեր աչքին միայն երևցող մի բան, և ամեն բան անց է կենում գնում իբրև մի երազ։

Ի՞նչ է մեր կեանքը։ Պատկերի պէս մեռած գալ է։ ստուերի նման անյ կացող մի բան է։ Ապուէն է պապկեղէ ղէչ մորթ, այսինքն է՝ ստուերի նման մեռոդ մի պատկեր է մարդս։ ասում է Մարգարէն։ Երջում ենք մենք պատկերի պէս մեր մէջքերի մէջ, որովհետև մեր խելքը ճշմարտութիւն է պատռում ու չէ գտնում։ ինչու որ կասկածներն անթափան հետն են միշտ։ Մեր սրտի մէջն էլ պատկերի նման ենք շրջում։ ինչու որ ցանկանում ենք վայելել բարիք՝ և չենք վայելում, որովհետև միայն յոյսերն են ուղեկից լինում մեզ մեր ունեցած ցանկութիւններին հասնելու ճանապարհում։ Երջում ենք պատկերով մարմնոյ մէջ։ որովհետև մեր այդի առաջ վոխվում է մեր հոդեղէն պատեհանը։ հիւանդութիւններն ու մահը սպառնում են մեզ։ Երջում ենք պատկերով բնական աշխարհում, ինչու որ երկիրս անդադար շարժվում է։ Երջում ենք պատկերով քաղաքական աշխարհի մէջ, ինչու որ մահն այդ տեղ էլ փոխում է մարդ կանց, ու ժամանակը ներս բերում նոր նոր կարիքներ և այլն։ Բայց որտեղ էլ որ չրջում ենք, ոչ մի տեղ էլ չենք գտնում մի յաւիտենական, մի մնայուն բան, որ կարող լիներ յագուրդ տալ մեր հոգւոյն՝ և այս ամենայն առնոյ-նորինն է և պրպտողին հ. գ-ոյ։

Ի՞նչ է մեր կեանքը։ Պատերազմի դաշտ է, որոյ վերայ մարմինը պատերազմում է հոգւոյ հետ։ Մարդս ծնում է բարի և չար հակումներով։ մի քանիսը մեզ քաշում են դէպի երկինք, միւսները՝ ձգում են դէպի երկիրս։ Մի քանիսը բարձրացնում են ու աղնուացնում մեզ, միւսները ստորացնում ու խայտառակում։ Մի քանիսը խաղաղութիւն ու հանգստութիւն են բերում մեր խղճմտանքի մէջ, միւսները՝ վրդովում ու խանգարում մեր սրտի անդորրութիւնն։ և այս իրար հակառակ գործողութիւններն յաւէտ են գալիս մեր մէջ միշտ և անդադար։ Ո՞վ էր և ինչ մարդ էր Աբաւ ե ւլն Պօղոս։ Նա էլ է գանգատվում այս պատերազմի վերայ։ Գ. Յովհ. Ա. 8։ ասում է՝ եթէ ասենք եմ անպաճելիս մէջ։ ու ընդդեմնամարտում են եմ խելքիս ասենները։

Ի՞նչ է մեր կեանքը։ Վշտերի ու չարչարանքների ճանապարհ է։ ելնել է սրդեօք աշխարհիս վերայ երբէք այնպիսի մի բազդաւոր մարդ, որ անցկացրած լինի իւր բոլոր կենաց տարիքն,

ոչ մի բանից չվշտանալով և ոչ մի բանից չզլարչարուելով։ Ո՛չ եղել է, ո՛չ էլ պիտի լինի։ Ով որ անօրէնութեամբ է յղացուել և մեղքի մէջ ծնուել, նա չէ կարող վշտերից ու չարչարանքներից ազատ մնալ։ Ով որ ինքը գլխից մինչև ոտը մարմնացած կարիք ու կարօտութիւն է, տկար ու անզօր արարած է, նա չէ կարող չզգալ զրկանք, ու չունենալ պակասութիւններ։ Ով որ ժամանակաւոր և անցաւոր բաների շրջանի մէջ է դրուած, չէ կարող ունենալ մշտական, անփոփոխ ուրախութիւն։ Ով որ ապրում է մարդկանց մէջ, որոնք որ ալեկոծուում են իրանց տակին ու վրայ անող կրքերից, այն մարդը չէ կարող չպատահել անախորժութիւնների։ Իսկ ով է մեղնից, որ տկարութեան ենթարկուած չէ, կամ մեղքից ու կրքերից ազատ է։ ԵՒ ուրեմն ով է, որ չիմ՝ կամ շատ փիշտ չէ քաշում, չէ լաց լինում, չարչարանքի մէջ չէ ու թշուառութիւն չէ կրում։

Ի՞նչ է մեր կեանքը։ Մեր կեանքը գործելու ժամանակ է։ Մենք գործում ենք Յիսուսի Քրիստոսի թագաւորութեան մէջ և ինքներս էլ նորա ձեռքի գործն ենք։ Նա ասում է մեզ իւր արդիւնքը, տեսհականանալով մեզ իւր ունեցած արդիւնքն։ իսկ մենք պէտք է շատ աւելացնենք մեր ունեցած հասւատը դէպի Նա, այդպէս արդարս ցնելով նորանով մեր հոգի մարդ լինելը մեր բարի գործերով։ Նա հաղորդում է մեզ արքութեան, ճշմարտութեան և իմաստութեան մէջ յառաջանալու միջոցներն, իսկ մենք պէտք է աճեցնենք այս աստուածային պարգևները՝ նորա հանապարհով գնալով։ Նա սերմանողն է, իսկ մենք նորա արտերը պէտք է լինինք։ Բայց մենք էլ պէտք է լինինք ոչ պակաս բարին սերմանողներ աւետարանից մինչև երկոյր, որպէս զի յաւիտենական կեանց մէջ հնձենք քաղցր պտուղներ։

Ահա մեր երկրաւոր կեանքի խորհուրդն, ահա լինչպէս պէտք է հասկանանք, թէ լինչու համար ենք ապրում։ Այդպէս էր նայում մեր ունեցած մարդկային կեանքի վերայ թագաւոր մարգարէն։ Հայ ինչ, էլիաք երբ եմ պանդխտութեան, երբ պիտի գամ, էլ երբ եմ Աստուծոյ երեսի առաջ։ Այդպէս էր նայում մեր այս աշխարհումն ունեցած կեանքի վերայ Պօղոս Առաքեալն։ Ինչ խղճալի վարք եմ ես, ով պիտի ինձ այս հանգանաքս տարհնէ։ Այդպէս էին նայում Աստուծոյ բոլոր սուրբերն որոնք որ դատապարտուած էին ապրելու Յիսուս Քրիստոսի համար

նախիտ չարչարանքներ կրելու և այդպիսի մահով մեռնելու, եւ ի՞նչպէս ուրիշ կերպ կարող ենք նայել այս կեանքի վերայ, ինչո՞ւ համար է մեզ տուած մեր կեանքը։ Միթէ նորա համար միայն, որ վայելենք այն ամենայն բարիքն, որ Աստուած այնպէս առատօրէն պարգեւել է մեզ, մեր երկրաւոր բնակութեան տեղն ամէն տեսակ լաւ՝ և մեզ համար օգտակար բաներով լցնելով։ Ո՛չ, դորա համար չէ տուած մեզ մեր կեանքն, այլ ծնել ենք մենք նորա համար, որպէս զի միշտ ապրենք, միշտ աճենք, բարձրանանք աւելի և աւելի դէպի վեր—դէպի սկիզբն ու վերջն ամենայն արարածների։ Մեր երկրաւոր կեանքն ապագայ մեր կեանքի նախագաւթն է միայն։ Երկրաւոր մեր երջանկութիւնն՝ մեր երկնաւոր երջանկութեան նախաճաշակն է միայն։ Մարդս այս ժամանակաւոր կեանքումն չէ կարող ունենալ երկրիս վերայ՝ ոչ կատարեալ դիտութիւն, ոչ անխոտոր բարի կամք և ոչ անմրդուկ երջանկութիւն։ Երկիրս չէ լրացնում մեր հոգւոյ պահանջները, չէ հոնդապատասխանում նորա անդուլ և անդադար ծարաւութեան, որով տարւում է դէպի առաքինութիւն, և չէ հարցնում նորան մխիթարութեան ու չէ քաջալերում, օգնելով նորան։

Եւ ի՞նչպէս կարելի է այս անցաւոր աշխարհիս վերայ գոնել այժ, քաջալերութիւն, զգնութիւն, և նպատակն բոլոր բարձր ու վսեմ ձգտումների, որոնն մարդս ընդհանրապէս՝ և յրիստոնեայն՝ առանձնապէս ընդունակ է։ Ո՞նչպէս կարող է տեսանելի աշխարհս ինքը բաւականութիւն տալ իրանով նորա անվերջ ցանկութիւններին, նորա անմահ հոգւոյ խորին և սուրբ ձգտումներին։ Հոգին բարձր է մարմնից, ինչպէս որ երկինքը բարձր է երկրից, ինչու որ հոգին աղգական է հոգեւոր աշխարհի հետ։

Ուրեմն, եթէ մեր հայրենիքն երկնքումն է, կարիք չկայ մեր մտքերն ու ցանկութիւնները երկրիս հետ և նորա բարեացն ու վայելչութեանց հետ կապելու։ Երկրաւոր ուրախութիւնները, փայլուն ոսկին, մեծահռչակ փառքն, երևելի տիտղոսներն ու մեծարանքներն, որ ձեռք են բերուած մեծամեծ աշխատութիւններով, նշանաւոր քաջագործութիւններով կամ մեծագործութիւններով, այո, ուշադրութեան արժանի են. բայց չի արժէ, որ երկար կանգնենք, նայենք այդ բարեմաս-

նաբթիւններուն վերայ։ Մ՛ին որդին, որ իւր ծնողաց տունն է շտապում գնալ, հասնել, ժամանակ չունի լաւ մտիկ տալ ճանապարհին պատահած ամեն մի գեղեցիկ ծառի վերայ ու ամեն մ՛ ծաղիկը դիտել։—Ինչ որ պարգևած է մեզ վերին Ճեչուքիւնն, այն էլ պէտք է գործ ածենք շնորհակալութեամբ, բայց երբեք պիտի անուշադիր ու անփոյթ չլինինք և չնեղենք մեր հոգին ունայն հոգսերով, որ չմոռանանք թէ՝ մ՛ր քնակութիւնը երկրքումն է։

Մ՛ի նեղսրտիլ, սիրելիս, որ ներկայ կեանքի ճանապարհը նեղ է ու դժուարին։ Որ կեանքիդ ընթացքի ւէջ հետդ միասին եկող երեք ուրիշ ընկերներ ունիս։—Որանցմէ մէկը՝ քեզ համար իւր մ՛ի ձեռքումը բռնած ունի պատկ, միւս ձեռքով ցոյց է տալի երկինքը։—այս մէկն ընկերներիդ՝ հաւատան է. երկրորդը՝ հանգարտ ու հանդիստ նայուածքովն, ուրախութիւնով ու սրտիդ խաղաղութիւն բերող կերպով ողջունում է քեզ ու քաջալերում։—այս երկրորդ ընկերդ՝ յոյսն է. երրորդը՝ հեղութեամբ և ընկերասիրաբար իւր գլուխը բացած է դէպի քեզ։—այս երրորդ ընկերդ՝ սէրն է։ Երկնից այս երեք դասերաց առաջնորդութեամբը պարզ և հանգիստ սրտով գնա՛—քեզ համար որոշուած ճանապարհումն։ Եւ որչափ որ աւելի սերտ ու բարեմտութիւնով լինի քո նորանց հետ ունեցած ընկերակցութիւնդ ու հաղորդակցութիւնդ, այնքան աւելի ապահով կերպով կհասնես քո նպատակիդ։ Եւ այնտեղ, ուր որ վայրում են հեռուստում, բարձրում երկնային մարմինների մէլիոնաւոր աշխարհներ, այնտեղ՝ և աւելի բարձրումը, աւելի հեռուստումն, աւելի լոր տեղումն, այնտեղ անստհմանութեան մէջ, յաւիտենականութեան մեջ՝ այն տեղ է քո երկինքը, քո իսկական հայրենիքն։ Ամէն։

(Թ՛ղթ։ Ռուս.) Վարդապետ Գ. Տէր Յակովբեանց Ազգդ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀՆԱԲՕՍԱԿԱՆ ՏԵՂԱՑՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՏԱՑ.

(Շարունակ. Ե վէրջ).

18.) Արքունի պալատն Ռուսաց յայսմ դիտաւորութեան առաջի աչաց ունելով զապագայ առաջնթաց աղդեցութիւն և զտիրապետութիւն, խորհելով խորհէր նախ քան զամենայն եւրոպայի տէրութիւնս ի ձեռս բերել զառեւտրական օգուտս ընդ հարուստ կողմանցն Ասիոյ, բանալ ճանապարհ ընդ արեւելեան հնդկաստան, միշտ ջանալով ի հիւսիսոյ անցանել ի Կասկաս, լսելով զայս պատգամաւորութիւն, ուրախ եղև յոյժ. բաւական զօրօք նուաճեաց զՃոլֆեզերեայ քաղաքս Բաքու, Դարբանդ և Շամախի: Տիրապետողական յառաջադիմութիւնք և երևելի քաջագործութիւնք Ռուսաց առիթ ետուն հայ մելիքացն Ղարաբաղու համայն ժողովրդականօք մտանել ի ներքոյ հովանաւորութեան Ռուսաց. և ի ձեռն յատուկ դեսպանի յայտնեցին զմիտս իւրեանց Մեծին Պետրոսի, որ բարեհաճութեամբ դարձոյց զդեսպանս, հրամայեաց տիրապետող հայ-մելիք իշխողացն զօրս ժողովել ի ժամ դալստեան իւրոյ ի տեսութիւն նորանուաճ Ճոլֆեզերեայ կողմանցն Կասպից: Գլխաւոր դեսպանն Իսրայէլ Օրին ի 1707 թ. ի Պետերբուրգայ իբր դեսպան առաքեցաւ ի Պարսկաստան առ Հուսէին շահն, տեղեկանալ զդրութիւնս միմեանց, և համոզելոյ զմիտս Հայաստանեցւոց առ այս նոր դիտաւորութիւն: Յետ յաջող վերադարձանելոյ գյանձնարարութիւնս վերադարձաւ՝ բերելով ի շահէն Պարսից ի պարգև Մեծին Պետրոսի 200 հազար ռուբլի, և յայտնեաց կայսերն թէ բաց ի Հայոցն Ղարաբաղու, Շամախին, Սղնախն և Ղազախ—Բօրչալին պատրաստի ունին 17 հազար զինուորառեալ զօրս և սպասեն կայսերական հրամանի վասն բարձրացուցանելոյ զդրօշակ ապստամբութեան ընդ դէմ մահմետականաց: Կայսրն մեծ շնորհս ցուցեալ Հայոց բարեհաճեցաւ ասել Իսրայելի Օրին վասն ազատութեան Հայոց

մինչև ց 40 հազար զօրս Ռուսաց և զընծայս Պարսից շնորհեաց վասն ծախուց զօրացն։ Խոստել համեստութեամբ մեծ շնորհակալութիւնս մատուցեալ թագաւորին հրաժարեցաւ յայն մեծ պաշտօնատարութենէն։

19.) Յառաջ քան զայս մեծն Պետրոս ունէր ի Պարսկաստան զմի ի հայկազանց Նաւասարդ անուն իրրև գործակալ, որ զամենայն հանգամանս և զիւրութիւնս պատահելոց ի թագաւորութեան Պարսից մանրամասն օրագրութեամբ մատուցանէր թագաւորին և լինէր պատճառ ուրախութեան նորա։ Յետ նորա զայս պաշտօն կատարեաց Ղազար ոմն, որ ոտացաւ մեծամեծ պարգեւս և աստիճան գեներալի։ Բարեմիտ կայսրն հաճեցաւ յանձնել սմա զ40 հազարեան զօրս վասն վերականգնելոյ զՂարաքաղ, բայց սա եւս ոչ յանձն էառ զառաջարկութիւն կայսեր, համարելով զայն գեր ի վերոյ քան զկարողութիւն իւր։ Հուսկ յետոյ Մեծն Պետրոս բարեհաճեցաւ պատասխանել, թէ ինքնին պատրաստի է առաջնորդել զօրաց իւրոց վասն ազատութեան և օգնականութեան Հայոց։

20.) Յետ այսորիկ հայկազն մելիքն Ղարաբաղու իմանալով զգալուստ Մեծին Պետրոսի ի Դարբանդ, իսկոյն բարձրացուցին զգրօշակ անկախութեան և 60,000 զինեալս առեալ զօրք ղէն ի ձեռին՝ պատրաստեցան ի ճակատ պատերազմի։ Հայկազն Դաւիթ բէգ իշխանն Սիւնեաց արիասիրտ, արդարակորով, բարեպաշտ և ծանօթն սուրբ Գրոց յետ ուսանելոյ և սրոշելոյ զսկզբնական և զվերջին հիմունս գործոյութեան իւրոյ ընդ Գէորգ կամ Շահ—Նաւազ թագաւորին Վրաց, ել ի Վրաստանէ ի 1721 թ. երկոտասան քաջընտիր զօրապետաց, որոց աւագքն են Մխիթար, մեծ Գէորգին, և Բայինդուրն, 40 հազար զինեալս առեալ զօրօք խաղաց գնաց յաշխարհն Սիւնեաց. և որք զօրաւորք ի Հայոց լուեալ զգալուստ նորա, առապեալք ի գառն ծառայութենէ այլազգեաց միաբանական սիրով ժողովեցան առ նա, նուաճեցին զգաւառն Սիւնեաց, և յաղթահարեալ թշնամին ի սէնոզէս պատերազմունս է զի անկան ի պատերազմի և է զի ընդ կրունկն դառնալով նկուն եղեալ փախեան։ Գործովք սրտին Դաւիթ բէկի նահանգն Սիւնեաց առ ժամանակ ազատեցաւ ի լծոյ այլազգեաց։ Յորժամ քաջ իշխանն Դաւիթ մկէր պատերազմունս ի սէր Հայ-

բենեայ ընդդէմ թշնամեաց, փաշային օսմանցւոց եհարց ցԴաւիթ բէգ՝ թէ առ ի՞նչ պատճառ ժողովեալ զօրս ի Հայոց մօրս գնէ։ Պատասխանի ետ Դաւիթ բէգ ասելով «ես կատարեմ զկրաման Մեծին Պետրոսի»։ Յայնժամ օսմանցիք փութով ձեռն ի գործ եդին ամրացուցանել զսահմանագլուխս իւրեանց, նուաճել զպարսկական տէրս յերևանայ մինչև ցԴարբէժ, որպէս զի արգելք լինիցին յառաջընթաց գործոց Դաւիթ բէգի և թագաւորին Ռուսաց։

Դաւիթ բէգն և հայազգի մելիքքն տեսանելով թէ երերի ակրաւթիւնն Պարսից և զօրանայ օր ըստ օրէ վնասակար իշխանաւթիւնն Օսմանցւոց ջան եդին տալ պատերազմն յերկիրն Սիւնեաց ընդդէմ թշնամեաց։ և երկու զօրապետք նորա Աւանխան—Մխրզայ և Աւան Իւղբաշի այլովք երկբաժին զօրօք պահպանէին զԼարաբաղ։ Ակղանցիք ևս բարձրացուցեալ դրօշակ ապստամբութեանց՝ արկեալ յաթոռոյ ի 1722 թ. զԹագաւորն Պարսից Շահ—Սուլթան—Հուսէին՝ տիրեցին Սպահան մայրաքաղաքին Պարսկաստանի, Լեկղիք կամ լեռնականք Դաղստանի տեսեալ զներկայութիւն կայսեր Ռուսաց և զբանակի նորին ի Դարբանդ, չկամարձակեցան ելանել յարշաւանս ի Լարաբաղ, յՈւտի և ի Գուգարս, Ուստի ոչ այլ ինչ մնայր Հայկազանց, բայց միայն յերկրէն իւրեանց միահամուռ զօրութեամբ հալածել զԹաթարս և զՊարսիկս, և փախստական առնել զՍարի—Մուստաֆայ փաշային, որ եկեալն էր զօրօք սիրապետել երկրին։

21.) Լուր գալստեան կայսեր Ռուսաց ի Դարբանդ խոհապէս խմացեալ Լարաբաղցի հայ մելիքացն և Վախտանգ արքայորդւոյն Շահ—Նաւազ Գիորգիոյ՝ 40 հազարեան զինավառեալ զօրօք ելին ընդ առաջ կայսեր Ռուսաց առ ափն Կուր գետոյ։ Սակայն կայսրն յետ նուաճելոյ զԴարբանդ, զԲաքու և զԳիլան յետս գարձաւ ի Ռուսաստան ի պատճառս թագաւորական գործոց, որով հատաւ յոյս յաջողութեան Հայաստանի և Վրաստանի։

22.) Հայք և Վրացիք յուսահատ մնալով ի մէջ սիրերիմ և արիւնարբու թշնամեաց իւրեանց, ապաւինեալ յԱստուած և ի տակաւաթիւ զօրս իւրեանց ընդ դէմ բազմաթիւ զօրաց թշնամեաց, զոմն ոչ տակաւս մնեցին արիւնահեղ պատերազմունս

և տալս ակամայ կամօք հարկեցան ճանաչել զիշխանապետուԹիւն նոցա։ Սարի—Մուստաֆայ կառավարիչն Գանձակի իբրև հառս եԹէ կայսրն Պետրոս չդաւաւ ի խորս Ռուսաստանի, քաջալերեալ յախուռն յարձակմամբ եմուտ ի Վրաստան, քանզի Թագաւորն Վրաց անտերունջ Թողեալ զհայրենիս իւր գնացեալ էր ի Ռուսաստան. յետ սոսկալի սրածուԹեանց և կոտորածոյ յոխորտանօք գարձոյց զզօրս իւր ի վերայ հայազգի մելիքացն Ղարաբաղի, սպառնալով հիմն ի վեր կործանել զերկիրն։ Հայկազեան մելիքքն երկրորդեցին զխնդիր իւրեանց առ կայսրն Ռուսաց, կամ տալ զօրս օգնականուԹեան ընդդէմ աշխարհաւերն Տաճկաց և Պարսից և կամ շնորհել տեղի ի կողմանս Կասպից ծովուն առ ի բնակել անդ։ Կայսրն Ռուսաց բարեհաճեցաւ ի 10 Նոյեմ. 1724. Թ. և ետ հրամանն դեներալ մայիօր Կրօպօտով կամենդանտին Դարբանդու առանց պատճառանաց տալ եկաւորեալն հայոյն զյարմարաւոր և զբաւականաչափ տեղիս մերձ ի ստուրբ Խաչ բերդն—Սուլագ Ագրախան և Թարղու գետոց և վարիլ ընդ նոսա այնպէս, զի մի ելցէ ի նոցունց տրտունջ կամ գանգատ, ասելով. որովհետև զժողովուրդս եկաւորեալս ի հայոց ընկալաք ի ներքոյ կայսերական պաշտպանուԹեան մերոյ։ Եւ զայսմանէ յայտնեաց հրովարտակաւ Եսայիա կաԹուղիկոսին Աղուանից, և հայ-մելիքացն և ժողովրդոցն Ղարաբաղու. բայց հանգամանք ժամանակին չներեցին հայոց տեղափոխիլ ի սահմանս Ռուսաց, և հայկազեան մելիք տիրապետողքն մնացին ժողովրդովքն հանդերձ ի նել զրաւԹեան։

23.) Գանգի սարաւակեար Սարի Մուստաֆայ փաշայ բուն բանակաւ իւրով եկաց ի Գանձակ քաղաքի և մնացեալ զօրացն հրամանն ետ բնակիլ ի սահմանս հայ-մելիքաց։ Դառնացաւ վիճակ ժողովրդոյ։ Մելիք-Աւան-Խան՝ որ հրամանատարն էր միւս մելիքաց, ժամ գտեալ գրաւեաց զսէր Սարի-Մուստաֆայ փաշայի և առ երեսս հնազանդուԹիւն եցոյց. բայց ի ծածուկ սէր և մտերմուԹիւն ունելով ընդ Ռուս գեղեցիկ լմն կերպիւ զարան գործեալ եհար, կոտորեաց զ35,000 անձինս յենիչարեան բանակէ Օսմանցւոց և զփաշային փախստական արար ի բերդն Երևան, և բան նշանին էր. «պահպանեցէ՛ք զնէն ասբճ զի յոասալի է վառն աճեցման. պընդացուցէ՛ք զնորն, որ ծէ խոտպանայ պալ

ղպա–ղ է–ը է ժամա–։» Ա յս երևելի անցք պատահեցան ի 1733 թուին։

Մէլիք Աւանն ազգայնովք իւրովք գնաց ի Ռուսաստան ի ժամանակս Աննայ կայսրուհւոյ, որ ընկալեալ զնա և զհամնախոհս նորին մեծաւ պատուով ըստ արժանեաց նոցունց շնորհեաց ասպիճան և ոճիկ։ Ժառանգք Մէլիք Աւան խանի բնակեալ յԱստրախան, ի Մոսկուա և ի Պետերբուրգ մինչ ի կայսերական ծառայութիւն անուամբս — Կնիազ Սմբատեանք, Կնիազ Մէլիքեանք և Հայրապետեանք։

24.) Իսկ Դաւիթ իշխանն այրն խոհական և քաջաբաղուկ յաղթեալ յոգնախտութ թշնամեաց շինեաց ամուր բերդ մի ի գիւղն Հալիձոր և ժողովեալ ի Հայոց արս կորովիս, կացոյց ի վերայ նոցա սպարապետ զՄխիթար՝ զայրն անպարտելի և զօրապետ՝ զԲայինդուր իշխանն ի տոհմէ Սմբատեանց. մինեալ բազում պատերազմունս զամն չորս, իսպառ ջնջեաց յաշխարհէ անտի Սիւնեաց և Արցախոյ զամենայն թշնամիս. բայց յետ նուաճելոյ զգաւառս Աճանանի, Կապանի, Զաւանդուրի Բաղաբերդի, Գիւնէի և Մեղրի, որ գլխաւոր բանակատեղին էր, ի միւսմ ճակատամարտի ընդդէմ խանին Նախիջևանի ի պարտութիւն մատնեցաւ։ Դեսպանք առաքեալք ի 1724, 25, 26, 27 և 1729 թուականին վասն խնդրելոյ զօգնութիւն ի կայսերաց Ռուսաց, պարզապէս ցուցանեն թէ յորպիսում վիճակի էր դրութիւն Հայոց Ղարաբաղի։ Սարի—Մուստաֆայ փաշային կալմեալ ի Թուրքմէն, ի Բուրդ և ի Թաթար զօրաց զբանակ մի ինքնին առաջնորդեալ նոցա եմուտ խրոխտալով յերկիրն Սիւնեաց և բանակեցաւ հանդէպ Հալիձորոյ, ուր էրն ժամանակաւոր տեղին կառավարութեան Դաւիթ բէգի։ Անմռռանալին Դաւիթ յաջողակ ձեռնարկութեամբ ստիպեաց զփաշային բառնալ զբանակ իւր. և ի դաշտին Հալիձորոյ ահեղ իմն մնորտիւ ճակատեալ յաղթեաց նմա քաջապէս և դարձոյց զնա ի վախուստ։

25.) Յետ մահուան Դաւթի ի 1727 թ. եկաց ի տեղի նորա ընտիր զօրապետն Մխիթար, որ քաջապէս պաշտպանեաց զհայրենիս իւր մինչև ց 1730 ամն. իսկ ազգատեացքն դաւաճանութեամբ սպանին զնա, և դարձեալ մատնեցին այլազգեաց զհայրենիս իւրեանց, որոգեալն ջերմաջերմն արեամբ հայրե-

նանուէրն Հայոց վասն անկախութեան։ Իսկ Հայկազեան զօրքն ամենեքեան ցրուեցան. և ոմանք ի նոցանէ գնացին առ մեծ իշխանն Ցովհաննէս, որ զայսու ժամանակաւ յաշխարհին Գուգարեան Ուտէացւոց զօրացեալ նուաճեաց ընդ իւրև ոչ սակաւ տեղիս. սակայն սա եւս ոչ կարաց ի գլուխ հանել զդիտաւորութիւն իւր, թողեալ զքաղաք իւր ի ձեռս այլազգեաց, խոյս եւս, մեկնեցաւ և գնաց յԱշտարխան։

26.) Պարսկաստան զամս տասն ի ձեռն վատարի շահ-իշխանաց կառավարեալ, վերջապէս ի 1732 թ. բարձրացոյց յաթոռ Կիւրոսի զերևելին Նադիր Շահ։ Ա.յս ահարկու պատերազմողն երկից անգամ յաղթանակ արար ի վերայ երկուց զօրաբանակացն Օսմանցւոց, մին մերձ յԷջմիածին, իսկ միւսն ի Կարս, ապրեաց մեծի մասին Հայաստանի և Վրաստանի և ամայ մայրաքաղաքին Տփխիսայ և Գանձակայ. տեսանելով զանչափ քաջութիւնս հոյ—մելիքացն Ղարաբաղի, որք քաջութեամբ պաշտպանեալ էին զհայրենիս իւրեանց, պարգևեաց նոցա իւրաքանչիւրոց արժանավայել պարգևս, և հաստատեաց զիշխանապետութիւնս նոցա յորդւոց յորդիս լինիլ տէր և իշխեցող սահմանաց իւրեանց։ Յօրէ ասաի մելիքքն միմիայն ունելով զիախուտն ի շահէն Պարսից, օր ըստ օրէ յառաջացեալ ընդարձակեցին զիշխանութիւնս և ղղօրութիւնս իւրեանց։ Առաւել քան զամենեսին շահն ապրեաց զՄելիք—Աւան և զորդի նորա զՄելիք—Եսայիա, որովհետև զամն ողջոյն կերակրեցին նորա զղօրս շահին։ Հայկազեան մելիքքն մինչև ց 1746 ամն ցմահն Նադիր-Շահի բացարձակ տէր և իշխան լինելով ի Ղարաբաղ, ի վերջոյ գտին ինքեանց ոխերիմ հակառակորդ զգլխաւոր պետն Ջուանշիրեան մեծի ցեղի՝ զՓանայ-Խան։

27.) Ա.յսպէս հինգ առանձին Մելիքական—ինքնիշխան տիրապետութիւնքն 1.) Ջրաբերդինն՝ Մելիք Մէջլում 2.) Գիւլիստանինն Մելիք Աբով, 3.) Վարանդինն՝ Մելիք Շահնազար, 4.) Խաչենայն Մելիք Ալավերդի, 5.)՝Դուզախայն՝ Մելիք Բախտամ՝ ինքնիշխանաբար կառավարէին զաշխարհն Ղարաբաղու։ Շահնազար մելիքն Վարանդի տեսեալ զերան բարեկամական դաշնապրութիւնս մելիք—Ագամին Ջրաբերդի, և մելիք Ցովսեփին Գիւլիստանի, երկեաւ. եմուտ ի բարեկամութիւն ընդ Ջուանշիրեան Փանայ—խանին, տալով նմա զդուստրն իւր ի

կնութիւն և զանմատոյց սեղին ուր շինեցաւ ամրոցն Շուշի. և զամն երկոտասան պատերազմեցաւ ընդ մելիք Ադամի և ընդ մելիք Յովսէփայ, որք քաջութեամբ պաշտպանէին զանկախութիւնս իւրեանց: Ներքին պատերազմունք յիշեալ Մելիքացն աղեաւալի եղեն որպէս վասն ամբողջ անկախութեան Ղարաբաղու, նոյնպէս և պատերազմող Մելիքաց. և հայբնակչաց երկուստեք: Սպառնացան կարողութիւնք նոցա: Ի վերջոյ մելիք Ադամն և մելիք Յովսէփն ի պարտութիւն մատնեալ ի հակառակորդ մելիք Շահնազարէն, փախստական գնացին ի Վրաստան, գտանել ազատութիւն ընդ հովանաւորութեամբ Թէյմուրազ Թագաւորին Վրաց:

Յայնժամ Փանայ—Խանն արձակ համարձակ տիրեաց երկրին և հպատակաց նոցա. և ստիպեաց զամենեսին կատարել զկամս իւր: Յետ քանի մի ինչ ամաց մելիք Ադամն և մելիք Յովսէփն միջնորդութեամբ խանին Գանձակայ վերադարձան, և հաշտութիւն տրաւեալ ընդ Փանայ—Խանին մտին ի Ղարաբաղ և տիրեցին իբրև հպատակ իշխան երկրին և ժողովրդականաց իւրեանց: Փանայ—Խանն ճիշտ պահպանեաց զայս պայմանագրութիւն, բայց յաջորդ նորա Իբրահիմ Խանն ոչ հայեցեալ ի պայմանս հօր իւրոյ, կալեալ զմելիք Եսայիաս էարկ ի բանտ, ապա զըրկեաց զնա ի կենաց և ի կայից, և ի տեղի նորա կարգեաց զմելիք Բախտամն:

28.) Եկատարինէ Բ. Թագուհին Ռուսաց յետ նուաճելոյ զՂրիմ, զարձոյց զայս իւր ի Կաւկաս և ի մերձակայ նահանգս Կասպիական ծովուն, ուստի և զվալերիան կոմսն Զուբով վերսային առաքեալ զօրօք ի Կաւկաս տիրեաց Դարբանդի, Բագուայ և Շամախւոյ: Կամք կայսերուհւոյն էին ազատել զՀայաստան և զՎրաստան ի ծանր լծոյ մահմետական բռնակալաց և առնուլ ընդ հովանաւորութեամբ իւրով իրրև զմի ի նահանգաց Ռուսիոյ: Մայրագոյն հրամանատարն կաւկասեան զօրաց գեներալն Պոտեմկին հրաւիրական թղթակցութեամբ գրեաց առ յիշեալ մելիքս զկայսերական բարեհաճութիւն, և յայտնեաց նոցա թէ, նա ունի հրաման ազատելոյ զնոսա ի ծառայութենէ Խուրքաց. և յորդորեաց զնոսա, միշտ պատրաստ լինիլ: Մելիքք սոսկացեալ զկայսերական յանդգնութիւն, յայտնեցին զՀատատարմութիւնս իւրեանց առ գահն Ռուսաց. և լիաբերան

շնորհակալութիւնս մատուցին կնիազ Պոտեմկինին, նաև գրեցին առ Յովսէփ Արքեպիսկոպոսն Արղութեանց և յայտնեցին զպատրաստութիւն և զհնազանդութիւն, զոր ինչ հրամայելոյ է կայսերութիւնն։

29·) Մելիք—Մէջլումն Ջրաբերդին, որդին Մելիք—Ադամայ Մելիք Աբովն Գիւլիստանի որդին մելիք Յովսէփայ, Մելիք Բախտամն Դուզախի որդին մելիք Աւանի յորդորական բանիւք գործակալաց Ռուսաց յուսալով ի մեծամեծ և ի փառաւոր խոստմունս նոցա ի 1787 թուականին եկին առ Յովհաննէս կաթուղիկոսն Աղուանից, հաստատեցին զթուղթ երդման և հաւատարմութեան և առաքեցին առ գեներալն Պոտեմկին, յայտնեցին և Յովսէփ Արքեպիսկոպոսին Արղութեանց, և խնդրեցին զառաքումն զօրաց Ռուսաց ի սահմանս երկրին յիշեալ մելիքաց։

30·) Մեծ հրամանատարն գեներալ Պոտեմկին յայտնեաց մելիքացն առաքել զարժանաւոր անձն ի բանակռուութիւն. բայց միաբան հայ մելիքքն պատասխանեցին, թէ ոչ կարեմք առաքել զոք յահէ խանին, մի գուցէ յայտնի լիցի խանին դիտաւորութիւն մեր, յապայն բնաջինջ լիցուք աղգաւ և տեղեաւ։ Գրութեամբ Յովսէփ Արքեպիսկոպոսի Յարութեան երկրէ եկն առ Պոտեմկին մեծապատիւ Յակոբեանցոս Դաւթեանց, որ հաշմարտապէս բացատրեաց զմիտս և զդիտաւորութիւնս հայ—մելիքաց։

31·) Որդին Փանայ—Խանի Իբրայիմ Խանն Շուշուայ իմանալով զյարաբերութիւն մելիքացն ընդ գեներալ Պոտեմկինի և զծածուկ ձեռնարկութիւնս գործակալացն Ռուսաց նաև զմիաբանութիւնս Մելիքայ ընդ Յովհաննէս կաթուղիկոսին՝ սպասէր դիպող ժամու վրէժխնդիր լինել։ և կալեալ բանտարկեաց զմելիք Աբովն Գիւլիստանի՝ յափշտակեաց զամենայն կայս և կարասիս նորա։ Իբրայիմ Խանն թէպէտ գրութեամբ գեներալ Պոտեմկինի առանց պատժոյ արձակեաց զմելիք Աբովն ի բանակէ, բայց յորժամ լսեաց զգաշն սիրոյ ընդ Հերակլ Աբբային Վրաց, կոչեաց առ ինքն զմելիք Մէջլումն, զմելիք Աբովն և զմելիք Բախտամն Լարիկ գնոսա ի բանտ և սկսաւ աներկիւղ գկալաւաճս և գերկիբս երից մելիքացն քարուքանդ առնել։ Եւ յորժամ Հերակլ արքայն Վրաց խաղաղ գօրօք Ռուսաւոյ ի Գանձակ,

մելիք Մէջլումն և մելիք Աբովն զերծեալ ի կապանաց բանտից փախստական անկան առ Հերակլ, խնդրեցին զօգնութիւն ի վան պաշտպանութեան երկրին և ժողովրդոց իւրեանց։ Հերակլ արքայ փութով զօրս յօգնութիւն հաճեցաւ հասուցանել թուով չորս հազար՝ զօրավարութեամբ կնիազ Օրբէլիանի, բայց երբ զօրավարն Ռուսաց Պ. Բուրնաշով ստացաւ զանակնուններլի հրաման յետս դառնալոյ զօրաց ի Ռուսաստան՝ Հերակլ զօրաք Ռուսաց դարձաւ ի Տփխիս, և Հայ մելիքքն ոչ ուստեքէ օգնութիւն գտեալ գնացին զհետ նորա։

32.) Իբրայիմ Խանն տեսանելով զվնասաբեր ձեռնարկութիւնս Ռուսաց ընդդէմ իւր, զերկիրն մելիք Բախտամի ետ ի ձեռս Պարսից, մահադեղով թունաւորեաց զՑովհաննէս կաթուղիկոս, քարուքանդ արար զերկիրն մելիք Մէջլումի, իսկ ի տեղի մելիք Աբովի կարգեաց իշխան զայլ ոք. հազարաւոր հայք ի սուր սուսերի մաշեցան կատաղութեամբ այսր պարսկի և այլ հազարաւորք ևս բռնադատեցան սոսկալի տանջանօք թողուլ զքրիստոնէութիւն, և այլ բազումք մանաւանդ ի ժողովրդականաց մելիք Աբովի իբրև հինգ հարիւր տուն՝ ընդ այլոց բազմաց թողեալ զբուն տեղիս ծննդեան իւրեանց տարագէմ գնացին որոնել ինքեանց ապահով տեղիս ի Վրաստան, ի Դարբանդ, յԱշտարխան, ի Ղզլար, ի Շամքոր, ի Աղնախ, ի Տփխիս և բազումք ևս ի Տաճկաստան։

33.) Աղայ Մահմէդ խան շահն Պարսից զայրացեալ ի վերայ յանդուգն արարմանց Իբրայիմ Խանին, որ չէաւ յանձն հպատակել ինքեան ի 1795 թ. բազմաթիւ զօրօք յարձակեցաւ ի Ղարաբաղ և զամն երկուս շարունակ քանդեաց և աւերեաց սրածութեամբ, ի վերջոյ տիրեաց Շուշի բերդին, ուրանօր և եգիտ զգերեզման իւր. քանզի ի սմին քաղաքի դաւաճանք նորա սպանին զնա։ Նախ քան զսպանումն իւր միով ամաւ յառաջ այս Ախտայ—Խան—Շահն յարձակեցաւ ի Վրաստան աւերեաց զայն սրածութեամբ։ Անբաղդ մայրաքաղաքն Վրաց Տփխիս մոլեռանդութեամբ զինուորաց Պարսից զերիս տիւս և զերիս գիշերս հրեղէն ովկիանոս եղեալ իսպառ դարձաւ ի մոխիր։ Տասն և վեց հազար գերի աղջկունք և տղայք, յորոց 4000 Վրացիք և 12000 Հայ գնացին բազմացուցանել զթիւ հարճից մեծամեծաց Պարսից ի հարէմն նոցա։

34.) Այս ցաւալից համբաւ եհաս ի լուր կայսեր Ռուսաց Պաւղոսի Ա. որ հրաման ետ գեներալ Պոռէմկինի զբռապետին տիրել կողմանցն Ղարաբաղի. իսկ Վրաստանն զիւազաղութիւն եգիտ միով սակաւաձեռն բանակաւ Ռուս զօրաց։ Այսպէս Ռուսաստանն որ իսկզբան 18 դարուն էր հշմարիտ բարեկամ և պաշտպան Ղարաբաղու Հայոց և Վերին Հայաստանի ի վերջ նոյն դարուն նախանձամոլեամբն Աստուծոյ եղև հեծդհետէ շնորհալի և ողորմած վեհափառ տէր և արքայ։

Յետ աւերման Տփխիսոյ Ագայ—Մահմատ Խանէ Հերակլ արքայ երկուցեալ ի միւս անգամ արշաւանաց նորա, զանազան պատճառութեամբ համաձայնեցաւ ոմանս ի տիրապետող հայ—մելիքաց Ղարաբաղու ածել ժողովրդովք նոցա ի բնակիլ ի Վրաստան, որոց ոմանք տարեալ բազում նեղութեանց և ցաւոց ոչ կորուսին զհաւատարմութիւնս առ Գահն Ռուսաց. վերստին խնդրեցին ի ձեռն գեն. Պոռէմկինի և Յովսէփ Արքեպիսկոպոսին զկայսերական պաշտպանութիւնն և զօգնութիւն տեղափոխելոյ նախապետական իրաւամբ և ժողովրդովք ի Դարբանդ կամ ի Սոմխէթ. առ այս հետևեցաւ բարձրագոյն հրովարտակն Պաւղոսի Ա. առ մելիքս և առ իշխանս Հայոց Ղարարազու, որով թոյլատրէր նոցա ժողովրդականօք հանդերձ տեղափոխել ի նահանգս Գիորգի թագաւորին Վրաց, որ կայր ի ներքոյ հովանաւորութեան Ռուսաց. և տայ հրաման յիշեալ թագաւորին՝ ընակեցուցանել զնոսա ի վիճակս Ղազախի և Բօրչալուայ և կամ ուր և կամիցին. միևնոյն նախնական իշխանութեամբ, փառօք և պատուօք և ժողովրդականօք յօգուտ անկեալ թագաւորութեան։

35.) Արքայն Վրաց Գիորգի ԺԳ. ընկալեալ ի ձեռաց մելիք Չուռշուտի և Փրիդոնի զհրովարտակ կայսերն յՅ Յունիսի 1799 թ. ընորհեաց մելիք Մէջլումին առաջնին հրովարտակ, յորում ի միջի այլոց գրեալ է։ «Դուք քերիք առիս ի մեծ Կայսերէն Ռուսաց զհրովարտակ վասն ընակեցուցանելոյ զձեզ ի տէրութեան մերում՝ և տալոյ ձեզ սեպհական տեղի. ընկալեալ ի յարգանս զինդիր ձեր. Մեք շնորհեմք ձեզ ի սեպհականութիւն զբերդն Լօռւոյ և զնահանգն Լաւրի բնակչօք, տեղեաւ, հողով և ջրովն և լերամբք ըստ այժմեան սահմանագծին. բայց որովհետև Լօռին յառաջ քան զայս աւուրս է հանգու-

ցեալ Շամիր — Աղին. եթէ որդիք կամ թոռունք նորա երևեսցին՝ յայնժամ նահանգն այն ըստ խոստման մերոյ կրկին տացի նոցա. իսկ ձեզ ի տեղի նորա տաց զայլ նահանգ. իսկ եթէ ոչ ոք երևեսցի ի նոցանէ դուք ազատեցէք յաւիտեան։ Թագաւորն Գիորգի շնորհեաց մելիք Մէջլումին զգիւղն Շնօղ և Դաեզ. մելիք Փրիդանին զգիւղն Ուզունլար (Օձաւն) իսկ մելիք Աբռվին՝ գԲօլնիս։

36։) *Մելիք Աբռվ բնակեալ ի Բօլնիս, գոլով այր հզօր և աչխարհաշէն լցոյց բազմամարդութեամբ զնահանգն Բօլնիսոյ և ըստ գրելոյ Կաթալևակոյ միշտ ի պատրաստի ունէր պատերի քան զ1000 զինեալս առս կորովիս, որով վանեալ զթշնամիս ի խաղաղութեան պահէր զնահանգն իւր։ Աբքայորդին Վրաց Աղեքսանդր բազմից յորդորեաց զնա հակիլ յիւր կողմն, բայց նա ոչ հայեցեալ ի բազմագիմի խոստմունս նորա, հաստատ պահեաց զերդումն առ գահն Ռուսաց, ի մոր եղ տեղափոխել ի նահանգէն Ախալցխոյ զ1000 գերդաստանս Հայոց, և յաճախ հեծելազօրօքն յարձակէր ի վերայ փաշայութեան Ախալցխոյ, որով ծագեցաւ անբաւականութիւն ընդ մէջ Ռուսաց և Թուրքաց, բայց վուխտով գեներալ Լազրև դադարեցոյց զյարձակումն նորա։ Ի 1800 թ. սա հրամանաւ Գիորգի փԳ. կազմեաց սահմանապահ զօրս յԱղքօրքի, և ստացաւ զպատուանուն «Քաջ-ահա-էալէ» պահպանէր զերթևեկ վաճառականս և զվարաւանս նոցա ի Կողբ և անտի ի Վրաստան, ստանալով ռոճիկս աւելի քան զ500 թումանս։ Գիորգի արքայ վասն քաջագործութեանց սորա միշտ կոչէր զնա «Քաջայալն ղօրաղէտ, աջահանա-օղլ որդէ Հայկազն Ղէլէ-Յավրէկայ, փոց նմա լեաբէբան ընդհակառնիւն»։ Մելիք Աբռվ և ազգական նորա Եսամի նուաճեցին զվիսխուցեալ Լաբարազին ի Բամբակաձոր ի սահմանս Օամանցւոց. մելիք Մէջլում հակառակ եկաց այսմ, վասնորոյ Գիորգի փԳ. շնորհեաց մելիք Մէջլումին զԽան — Աբքն Բօրչալուի փոխանակ հպատակաց իւրոց։*

Յետ մահուանն Գիորգայ արքայազն Դաւիթ խլեաց զվիշեալ Աբխն ի Մէջլումայ, և սա գանգատեաց գրաճ Մուսին — Պուշկինն, տալ նմա փոխանակ Լօռւոյ զվիշեալ Խան — Աբխն։ Գրաճ Մուսին Պուշկինն գնեաց ի նմանէ զԼօռի 6000 ռուբ. և միջնորդ եաց կայսեր վարձատրել զմելիք Մէջլումն վասնորոյ հա-

աստարմութեան «ակելչի» ըլով։ Բայց իշխան Զիցիանովն յամենայն դէպս հակառակ եկաց մելիքացն Ղարաբաղու, պատճառելով՝ թէ Իբրայիմ-խանն ունի 60,000 տուն հայս ի հպատակաց հինգ երևելի մելիքաց հայոց, որք զսկզբնաւորութիւնս իւրեանց առնուն ի թագաւորաց հնոյն Հայաստանի։

Մելիք Մէջլումն թողեալ զՎրաստան վերադարձաւ ի Ղարաբաղ. և յորդորական բանիւք համոզեաց զԻբրայիմ—խանն Նուշուոյ մոռանել ի հպատակութիւն Ռուսաց. ի ձեռն մելիք Ռուշանի ճեղքեալ զզօրս Պարսից, զօրս յօգնութեան հասոյց գնդապետ Կարեագինի ի բերդն Շահ-Բուլախ։

Ի ժամանակս կուսակալութեան կնիազ Զիցիանովի քաջութեամբ հռչակեցան մելիք Աբովն և որդի նորա Ռոստոմ բէգն, հաւաքեալ ի ժողովրդականաց զքաջարի հեծելազօրս պահպանէին զսահմանագլուխս Պարսից, և կատարէին զպաշտօն արագահաս զօրականաց։ Ի 1804 թ. ի ժամ պաշարման երևան բերդի իսպառ կարճեցաւ երթևեկութիւն և հաղորդակցութիւն Վրաստանի ընդ զօրաց կնիազ Զիցիանովի, յիշեալ Ռոստոմ բէգն քաջապէս երկիցս հասոյց յերևան վառօթ, ռումբս, և պաշարս ուտելեաց։ Ցամսեանն Օգոստ. ի 1804 թ. կնիազ Զիցիանով կրկին առաքեաց յերևանայ զքաջն Ռոստոմ բէգ ի Փամբակ վասն բերելոյ պաշար ուտելեաց, և պաշտպանելոյ ի ճանապարհին զվերադարձող Վրացի իշխանս յերևանայ։

Ի ճանապարհին Ղարաքիլիսոյ ի Փամբակաձոր բանակն Ռոստոմ-բէգի ընդ Վրացի իշխանաց պատահեցաւ տասն-հազարեան բանակին Պարսից՝ զօրավարութեամբ Փիր-Ղուլի-Խանին և Ալէքսանդրի Հերակլեան։ Աստ բացաւ արիւնահեղ պատերազմն, և ի խռնիլ հեծելազօրացն Պարսից ընդ առաջնապահ Ղարաբաղցի հեծելազօրս, երիվարն Ռոստոմ-բէգի, որ ի ճակատ արձանացեալ կայր, սպանաւ, և ինքն երիս վէրս ստացաւ, բանակ Պարսից ի պարտութիւն մատնեցաւ, որոյ կէսքն գնացին ի Թէհրան, և կէսքն բանտարկեցան ի Դաւրէժ։ Ալէքսանդր Հերակլեան, որ քաջ ճանաչէր զվիրաւորեալն Ռոստոմ-բէգ, հրամայեաց արիւնաթաթախ տանել զնա ի բուն բանակն առ Աբբաս-Միրզայ՝ ժառանգ Պարսից, որ հրամայեաց պրկեալ ձեռօք և երկաթի կապանօք բանտարկել զնա ցվերադարձ իւրեան վճռ ամենայ խաւարչտին բանտարկութեան և զառն տան-

ջանաց Ռոստոմ - բէգն սպանաւ ի 1805 ամի ի Դաւրէժ քաղաքի։

Մելիք Ջումշուտն վերադարձեալ ի հայրենիս իւր ի Ղարաբաղ՝ ոչ ստեաց զերդումն իւր, այլ միշտ տայր օգնութիւնս և պաշար՝ նեղեալ զօրաց Ռուսաց որ ի Շուշի։ Ցետ մահուանն կնիազ Ցիցիանովի Իբրահիմ - Խանն Շուշւոյ ստեալ զերդումն իւր կալաւ զկողմն Պարսից, մելիք Ջումշուտն ձեռնտու եղև գնդապետ Լիսանևիչի առ տեղեաւն սպանանել զուխտազանց խանն. և յօրէ աստի այս մելիք միշտ և հանապազ յայտնէր գեներալ Նէստայեվին զհանգամանաց գործոցն Ղարաբաղի և Պարսկաստանի։

Ցետ մահուան մելիք Ադովի որդի նորա մելիք Մինաս բէգն դիմեաց խնդրանօք առ կուսակալն Վրաստանի Տորմասով առ ի հաստատել ինքեան որպէս սեպհական ժառանգութիւն զիօլնիս բնակչօք հանդերձ. բայց ոչ յաջողեցաւ նմա կատարումն այսր խնդրոյ. վասնորոյ Ղարաբաղցի մելիքքն վերադարձան անդէն ի 1808 ամի ի հայրենիս իւրեանց։ Աստանօր սպառին պատմութիւնք գործոց նոցա ի Վրաստան։—Ի վերին Հայաստանի։

37.) Հայք որք ի սահմանի Վրաց էին, այն է ի Սոմխէթի, ի Բորչալի, ի Լօռի, ի Ղազախ և ի Շամշադին ընդ Վրաստանի կային ի ներքոյ հովանաւորութեան Ռուսաց. իսկ Արարատեան գաւառն և Ս. Աթոռն Էջմիածնի հեծէր ընդ բռնութեամբ Պարսից։ Ցանկարծ շահզատային Աբբաս - Միրզայ բազմաթիւ զօրօք յարձակեցաւ ի սահմանս Վրաստանի, կամելով վերստին ի ձեռս բերել զկորուսեալ գաւառս իւր, շատ նեղացոյց զՀայս, զերևելի իշխանս և մանաւանդ զբարձրաստիճան եկեղեցականս, հրամայելով նոցա յորդորել զՀայս ունել զկողմն Պարսից։ Բռնութիւն Շահզատային ի վերայ Հայոց յայնժամ քան զչափն բարձրացաւ. երբ քաջարի զօրքն Ռուսաց դիմեցին ի վերայ զօրաց Պարսից և ստիպեցին դառնալ յետս։ Նախ յաղթութիւնն հայազգի քաջամարտիկ իշխան Մադաթեանի ի Շամքոռ ի վերայ Պարսից, և ապա պատերազմն Գանձակայ (Ելիսավէտօպօլոյ) նախագուշակեցին զապագայ վիճակ նոցա։ բանակն Կաւկասեան զօրաց առաջնորդութեամբ մեծ զօրասպետին Պասկեվիչի վրէժ առնելով յաւերողաց խռովարութեան, ի 1827

ամին ետանց ընդ Ազգիբէուկ ընդ Բէզաբդալ և ընդ լերինս Բամբակայ՝ եմուտ յէջմիածին և ի հին Նախիջևան, արագութեամբ նուաճեաց զԱբբասապատ, զՄարդարատպատ, զԵրևան, զՄաքուդ և զԹաւրէզ. ձգեցաւ ի Մարանդ և ի Խոյ և հուսկ յետոյ զտեղի էառ յԱրտաւիլ և ի ստորոտս լերինն Ղափլանդուս. Այսպէս զինու զօրութեամբ Ռուսաց զզգեցաւ Պարսկական Հայաստանն նուաճեցաւ ի սուղ միջոցի. Նախ քան զնուաճումն երկրին Արարատայ եղբայր Սարգսարին Երևանայ Հասան-խան. և Նախիջաւանին մեծ վտանգ սպառնային Մայր Աթոռոյն Ս. էջմիածնի մնասուանդ վերափոխ կաթուղիկոսին. ուստի հոգելոյս Հայրապետն Եփրեմ միաբանօքն էջմիածնի եկին ի սահմանս Ռուսաց ի Ղարաքաղ և ապա ի Հաղբատ, ուր եկաց մինչև ցվերջ պատերազմին Ռուսաց ընդ Պարսից.

38.) Յաւարտ համառօտագրութեանս արժան է յիշատակել աստ և զանուանս այնց հայկազն անձանց որք զանձինս իւրեանց ոչ խնայեցին ի ժամ պատերազմին Ռուսաց ընդ Պարսից, ընդ Օսմանեցւոց և ընդ Կաւկասեան լեռնականաց և աքանչելի սիրտգործութեամբ հռչակեցին զինքեանս ի մարզս պատերազմաց և ճակատուց. Աշտարակեցի Ներսէս Արքեպիսկոպոսն՝ որ եղև յետոյ կաթուղիկոս, խաչ ի ձեռին ընդ գրաֆ Պասկևիչի եմուտ ի Հայաստան և զմեծ մասն նորա քարոզելով արար հպատակս Ռուսաց. Նամշաղնեցի Գրիգոր Արքեպիսկոպոսն Քալանթարեանց զգեցեալ զոտարազ չէքքեղի սուր ի ձեռին հալածականս արար զպատտամբս Նամշաղնի, Ղազախի և Բորչալուի, որոց բնակիչք ի տես անելն զնա զինավառեալ, իրաւամբ Փչէնչ կոչէին զնա և Պոպսկոյ. Քաջամարտիկ իշխանն Մադաթեան հռչակեալն պատերազմական հրաշագործութեամբն, պատերազմական սիրտգործութեամբ Գանձակայ և Նամբորի խոցեաց զսիրտ Աբբաս-Միրզայի. Գնդապետն Ղազարոս Լազարեանց՝ որ անդուլ ջանիւք և իմաստուն կարգադրութեամբ եկաց ի գլուխ գաղթելոցն ի Պարսկաստանէ անձանց իբրև 40,000աց ի Հայաստան ինախաբնակ և ի հայրենի աշխարհ իւրեանց. Իշխանն Վասիլ Բէհբուդեանց վանեաց զԹշնաւիս, և զդրօշակ Ռուսաց բարձրացոյց ի կատարս լերանց Բաշ-Կիդիկլեարի և ի Կարս. Անպարտելի իշխանն Մաւսէս Երևայնաբազուկ Աղղութեանց վեր ի վայր արար զԿաւկասեան լեռնարնակս և զազմուհիգն

նահատակութեամբ և պատերազմաք կանգնեաց ինքեան կրթող և սրձան ի բարձունս Կաւկասեան լերանց։

Ցիշատակաց արժանի են Կարնեցի Կարապետ Արքեպիսկոպոսն Բագրատունի և Սեբաստիոս Արքեպիսկոպոսն Կարսայ, որք անքուն քարոզութեամբ պատրաստեցին զմիտս Կարսեցւոյ, Կարնեցի, Բասենցի և Բայազէդցի Հայոց գաղթիլ ի Հայաստան, Գաղթականաք երից փաշայութեանց Թուրքիոյ տեղափոխեցան 12,655 գերդաստանաւք ոգիք իբր 76,000 և եկեալ հիմնեցին զբնակութիւն իւրեանց ի զանազան տեղիս — յԱխալցխայ և ի սահմանս նորին, ի գաւառսն Շիրակայ, Երևանայ և Գեղարքունեաց, — Հնարի՞ն ինչ է մոռանալ զԱրծափեցի Մանուկ ազգային, որ քանի մի թիկնապահ առաքանմամբ երիտասարդ օք հայելով յալէզարդն Մասիս, ի միտ բերելով զմեծութիւնս ազգին, ջարդելով զբուրդատանցիս, ապա ի Մասիսն յայսկոյս անցեալ ի սկզբան պատերազմոյ Ռուսաց ընդ Պարսից խորտակեաց զզօրս Հասան-Խանի, որոյ խորամանկութեամբն անձնատուր եղև ի սէր հայրենեաց։ Անհնարին է ի մոռացոնս արկանել զհիասքանչ քաջագործութիւնս Ղարաբաղցի, Երևանցի, Լօռեցի, Զորագեցի և Ղազախեցի Հայոց, որք զհայրենեաց քար և հողն Պարսկական արեամբ լուացեալ, զարիւնս իւրեանց թափեցին վասն ազատութեան հայրենի աշխարհին իւրեանց, մնքրթ ինչ իցէ մոռանալ զՇուլավերցի հսկայն Սօսէ ազայ և և զմեզիք Ցուլհանջանն, որք խոյանային ի սարս և ի ձորս Քվէշու և Բօլնիսի զառաջս ունել երկրակործան Ռուրդ Օքիւզ ազային, սպանին զորդի և զզօրս նորա, ապա ի պակասիլ զառօգոյ՝ հսկայքս ղէն ի ձեռս առիւծապէս պնդեցան զհետ նոցա, հարին և հարան և ի վերջոյ անկան զնախանձելին մեռանելով մահ։ Այժմ գնամք առ Զորագեցիս, Գովասանական բանիւք պատմեն ահռնատեսքն զքաջագործութիւնս Շօղեցի Վերան քեխի Բէգբաշեանց, Հաղբատեցի Ցարութիւնի Երզնկեան, ըմհահաս Բաղալի Պարանեան, Դսեղեցի ահեղատեսիլ և վիթխարի Ցովակիմայ Թումանեան, որք սրով, Ճրով և հրապինուք քաջընտիր տպատապինեալ երիտասարդ օք դողացուցեալ զսարս և զձորս Լօռւոյ և Զորագետի, արիաբար հոչակեցին զինքեանս ընդդէմ սրիկայից և տաճկնախաղաց զօրաց Պարսից, որք դէմ եղեալ կամէին դալ ի բռնադիր զՀայաստան, ունիլ զձե-

րուն հայրապետն Եփրեմ, և կենդանի տունիլ ինուէր Շահզատային. բայց արիուրթիւն Զորագետցւոց հալածական արար զՊարսիկ զօրս։

39.) *Ցետ նուաճելոյ Կայսերուրթեան Ռուսաց զերևան և զբոլոր նահանգս Արարատեան, և ազատուրթեան Մայր Աթոռոյն Ս. Էջմիածնի, ծերունազարդ Հայրապետն Եփրեմ դարձաւ ի Հաղբատայ ի 1828 ամի յազատեալն ի Սուրբ Էջմիածին, ի 1830 ամի, ի պակասիլ լուսոյ աչաց հրաժարական ետ, ընտրել զոք ի տեղի իւր և ի 1831 ընտրեցաւ Յովհաննէս Ք. Կարբեցի ի կաթուղիկոսուրթիւն Հայոց. յորոյ աւուրս հաստատեցաւ կանոնադրուրթիւն յաղագս կառավարուրթեան եկեղեցեաց Հայոց ի Ռուսաստան, ի կայսերէն Ռուսաց ի 11 Մարտի 1336 ամի, որով և բացան Սրբազան Սինոդն Էջմիածնի, վեց վիճակային Կոնսիստորեայք, Հոգևոր կառավարուրթիւնք։ Սա ի կենդանուրթեան իւրում՝ վճարեաց զծանր պարտս Աթոռոյն. և զտան հազար մանէթ եդ յարքունի բանկս յանուն Սուրբ Աթոռոյն Լուսաւորչի։*

Ռուսոմ՝—Բէկ Երզնկեանց։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ ԵՒ ԸՆՏԱՆԻՔԸ

ՄԱՏԱՂ ՍԵՐՆԴԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ, ԵՒ ՆՈՑԱ՝ ՄԻՄԵԱՆՑ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ.

(Շարունակութիւն և վերջ)

Այսպէս ուրեմն ուսումնարանը կարող է առաւել մեծ չափով աշակերտի բարքի և կամքի վերայ ազդել և նորան ապագայ կեանքի համար նախապատրաստել քան թէ ընտանիքը. այս պատճառով նա կոչուած է անհրաժեշտ ուժգնան իւր աշակերտներէն քննութիւնեան կոչակերպութեան վրայ։

Այդ դաստիարակութեան երկու հաստատութիւնների խնդիրներից մինն այն է որ նրանցից իւրաքանչիւրը ինչ սահմանների մէջ որ միւսը ինքնուրոյն գործումէ պիտի յարգէ, միւսի իրաւունքներն կամովին պիտի ճանաչէ և նորան պէտք եղած ուշադրութիւն ընծայել և երբէք չըպիտի մանուկների առ միւսի դործ դրած միջոցներ պախարակէ։ Եւ որովհետև դաստիարակչի

հղինակութիւնն նորա աշխատանքի հետևանքի համար մի անհրաժեշտ նախապայման է, ուստի և ծնողները նորա գործունէութեանը մեծ վնաս չտալու համար կըլինին, եթէ ուսուցչին իրանց մանուկների ներկայութեամբ պատուարկեն, կամ նորա որը և իցէ թոյլ կողմերն չիշատակեն, առանց յարմարանքի նորա մասին խօսելն, կամ թէ նրան ծաղրելու։ Շատ սխալ կլինէր, եթէ մանուկներին ընտանեկան պարտաւորութիւններն ճշտիւ կատարելու մէջ արգելք լինէին և նրանց ուղիղ յարաբերութիւնն ընտանեկան խնդիրներում չըդնահատէին, իսկ միւս կողմից շատ ցաւալի կըլինէր, եթէ որ ընտանիքը մանուկների արած սխալն մի սխալը նկատէր և նրանց գանգատներին իրանց ուսուցիչների մասին առանց քննելու հաւատ ընծայէր։ Եթէ մանուկները գիտեն որ ուսումնարանում ստանալիք պատժի միջոցին իրանց ծնողներն միշտ նրանց պաշտպան պիտի հանդիսանան, այն ժամանակ ուսուցչին շատ անգամ անիրաւացի կերպով կընդիմանան և նորա բարերար ազդեցութիւնն նրանց վերայ իր նշանակութիւնը կկորցնէ։ Նոյնպէս և սխալ կըլինէր, եթէ ուսուցիչները ծնողների զարգացման աստիճանը, ծագումն և հղինակութիւնն պակաս դնահատէին իրանց աշակերտների առջև, եթէ գոքա մինչև անգամ ժողովրդի ամենաստորին դասակարգին պատկանէին։ Շատ անիրաւացի կըլինի, եթէ ուսումնարանը ծնողներին առանց մի որ և է պատճառի արգելք լինի, երբ նոքա մի պատահած պատժի դէպքի մէջ խառնվումն և գործի իսկական պատճառն իմանալ են ուզում, այդ միջոցին հարկաւոր է նորանց հանդստացնել և հասկացնել թէ նա նորա պատակների համար լաւն է կամենում և միմիայն այն ժամանակ պատժի է դիմում, երբ այդ անպայման հարկաւոր է, իսկ յետոյ պարզել ծնողներին պատժի պատճառներն և չափը. բայց եթէ ուսուցիչը պատժելու միջոցին չափից անցնում է, շատ լաւ կլինէր որ նորան այդ մասին չիշեցնեն, գի այդ շատ դէպքերում բարերար ազդեցութիւն կունենայ։

Ծնողներին հետացնելն և նրանց պահանջի վերայ ուշք չդրձնելն անիրաւացի է նաև այն կողմից, որ նորա իրանց պատակների վերայ ամենամեծ իրաւունք ունին քանիմէ ուսուցիչը, և միւս կողմից այդ շատ անմիտ բան կլինէր, որով հետև ուսուցիչը դրանով վտանգի է ենթարկվում և ընտանիքից ի ներքուստ բոլորովին բաժանվում։ իսկ յետոյ նորա գործնական գործունէութիւնն ինչքան պակասաւոր կարող է լինիլ, այդ մասին արդէն վերը չիշեցինք։ Ուսուցչի այդ երկու կողմանակի հարաբերութիւնները իրարից բաժանելու համար պէտք է, որ ուսուցիչը ինքն ընտանիքի մէջ յայտնի, որ և հնազանդութիւն ստացնել և դաստիարակչական ազդեցութեան հետևանքների մասին մանուկների մտաւոր զարգացման վերաբերմամբ և թէ իրանց գործ գրած միջոցներն ևս պիտի միմեանց հաղորդին։ Նոքա պարզ պիտի իմանան, թէ արդեօք իրանց տանիկների մարմնական և հոգևական առողջութիւնը դէպի լաւն է գնացել, թէ

ոչ։ Նոքա հետևիալ հարցերին պիտի պատասխանեն, թէ արդեօք մեքի, հոգու և կեանքի կազմակերպութեան վերաբերմամբ էլ ի՞նչ է պակասում. մինչև ցայժմ գործ դրած միջոցներն պէտք պահպանել նոյնութեամբ, թէ փոփոխութիւն է հարկաւոր մտցնել. նրանց վարմունքը շատ խո՞տ էր թէ շատ մեղմ. ի՞նչ ապդեցութիւն են արած խաղակից ընկերներն ու շրջակայքը. հարկաւո՞ր է արդեօք խիստ հսկողութիւն, թէ պէտք սանիկին աւելի ազատութիւն տալ ևլն. ահա այսպիսի և սրանց նման շատ հարցեր կան, որոնք ծնողների և ուսուցիչների մէջ պիտի պարզուեն։

Այս շատ կարևոր է ուսուցչի համար, քանի որ նա բազմաթիւ աշակերտների հետ է գործ ունենում և նրան գրեթէ անհնարին է իւրաքանչիւրի հոգու մէջ ծագած մտքերն ու պատդութիւնները ճշտիւ ճանաչել, մինչդեռ ծնողներին այդ աւելի հեշտ է յաջողւում. սակայն նա պարտաւոր է այդ իմանալ, եթէ որ ուղիղ ճանապարհով և վստահութեամբ նրանց վերայ ներգործ՛ել է ուզում։

Զգուշութեան համար հարկաւոր է խոյս տալ կեղծ և աննպատակայարմար կրթական միջոցներ գործ դնելուց, ինչպէս օրինակ, ցաւի և ամօթի երկիւղը, շահելու և ճաշակելու յոյսը սիրումն չափազանց գրգռել։ Դոքա թէև առ ժամանակ ազդում են, բայց բնաւորութեան մի սխալ ուղղութիւն են տալիս, որովհետև նոքա ճաշակասիրութիւնը զարգացնելով, զարգացնումն նաև նորա զգայականութիւնն, իսկ սաստիկ պատուասիրութիւնն յառաջացնելով, յառաջացնում միևնոյն ժամանակ նոսասիրութիւն, որոնք բարոյականութեան ամենավտանգաւոր թշնամիներ են։ Ընդհակառակն այդ բանների դէմ պէտք է ամեն մի քայլափոխում՝ մաքառել և նրանց փոխարէն սէր և բարեացակամութիւն, Աստուծոյ երկիւղը և վսեմ գաղափարը նորանց սրտերում պիտի սերմանել։ Մանուկը այն բարին, որին իրան մերձեցնումն պիտի հասկանայ և սովորի ոչ թէ նորա համար որ նորան շահ է բերում և կամ զգայական զուարճութիւն, այլ որովհետև դա ինքն ըստ ինքեան բարի է, և մարդիկների բարօրութեան նպաստում, որովհետև դա արդար է և իրաւացի, որովհետև մարդուս պարտքը այդ է պահանջում և ամեն բանից առաջ—որովհետև Աստուած այդ է կամենում։ Հնազանդութիւն, պարտաղդացում, համեստութիւն, երախտագիտութիւն, անձնուէր սէր պէտք է ծնողներն և ուսուցիչներն մանուկների սրտում տնկեն. մանուկների ամեն մտածմունքն ու զգացմունքը, կամքն ու արարքը պէտք է կրօնական հոգով ներշնչուած լինին։ Մանուկը պարտաւոր է վաղ ժամանակից ուսանել Աստուծուն ծառայել և իւր բոլոր գործերի մէջ կրօնական ձգտումներով առաջնորդուել։ Աստուած ամեն բան տեսնումէ ինչ որ դուս մտածում և անում ես, նա այդ մասին քեզանից հաշիւ կըպահանջէ։ «Եւ ինչպէս պէտք ես այնպիսի մի մեծ չարիք գործեմ և իմ տիրոջ Աստուծու դէմ մեղանչեմ»։ Ահա, այդ պիտի լինին շարժառիթներ մանուկների բոլոր անելիքի և չանելիքի համար, և ոչ թէ արտաքին օգուտ և շահ։ Ծնողներն ու ուսուցիչներն դաստիարակչական գործի մէջ միշտ այն դա-

ղափարով պիտի առաջնորդուին, որ ոչ թէ ժամանակաւոր բարիքներ և ամեն տեսակ ղժայական զուարճութիւններ, այլ մի համեստ և երկիւղած բարք կարող է հոգու համար երջանկութիւն պատրաստել. նորա կարող են թէև ուշք դարձնել, որ ծանօթութիւններ և գործնական իրերում պատրաստականութիւններ արժէք ունին, սակայն նրանց գլխաւոր սկզբունքը պիտի լինի. « սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն »։ Նրանց բոլոր դաստիարակչական աշխատանքները պէտք է այնպիսի գիտութեամբ առաջնորդուին, թէ մարգասիրութեան, մաքուր մարդկութեան և բարոյականութեան աղնիւ սերունդ միայն այն ժամանակ կարող է կեանքի հոսանքների և փոթորիկների դէմ մաքառել, երբ նա Աստուծու երկիւղածութիւն իւր համար արմատ է շինել։ Կրօնականութիւնը, բարոյականութիւնը և մարդասիրութիւնը բարձրացնումն մարդկային բնութիւնը իւր ամենաարժէք արժանաւորութեան. և այս միմիայն այն ժամանակ տեղի կարող է ունենալ երբ որ երեքն էս ի ներքուստ միմեանց հետ կապուած հաւասարապէս աճում և զարգանում են։

Ա՛յդպիսի ոգով յառաջ տարուած դաստիարակութիւնը էս առաւել ազդեցիկ և արդիւնաւոր կըլինի, որ՛ոն որ ձնողներն և ուսուցիչներն մէնեակ հեռ սերտ կապով կապուած էլինին և իւրեանց դաստիարակչական գործունէութիւնների հետևանքներէ և իւ գործ հոմար գործադրելէ մէջնեներէ մարդն մէնեակ լըսելկացնեն և լըհասկացնեն։

Նշանպէս շատ յանկալի էլինէր, որ ձնողներն ու ուսուցիչները սանիկներէ ապագայ կոչման ընդունելեան վերաբերմամբ մէնեակ մէջ համայնութիւն կայացնէին. որովհետև շատ անգամ այդ բանի նկատմամբ ծուռ ճանապարհով են ընթացել, որով և շատ երիտասարդների դժբախտութեան պատճառ են եղած, որոնք այնպիսի կեանքի շրջանի մէջ են ընկնում, որ իրանց կոչման բոլորովին անհամապատասխան են։

Կոչման տեսակներն որոշելու և դատելու մէջ մարդ շատ սխալների է հանդիպում. Սովորաբար արհեստը աւելի երկրորդական տեղ է բռնում, մինչդեռ դա՝ եթէ լաւ սովորեցնեն և դորա մէջ քաջ վարժեցնեն, ոսկեայ երկիր պիտի տայ, իսկ ընդհակառակն զանազան պաշտօնական աստիճաններին շատ յաճախ առաջնակարգ տեղի են տալի և աւելի գնահատում և չեն նկատում որ շատ անգամ արտաքին փայլը շատ թշուառութեանց աւիթ է լինում։

Շատ սխալ է նոյնպէս որ ծնողներն իւրեանց շատ քիչ ընդունակ զաւակներին ստիպուեն բարձր աստիճան ընտրել, միւս կողմից էլ ցաւալի է, որ ստորին դասակարգը իւր տաղանդաւոր զաւակների ընդունակութիւնների մասին շատ տակաւ հասկացողութիւն ունի և նրանց 14 տարեկան հասակում ուսումնարանից հեռացնում են։ Կեանքի կոչման ընտրութեան միջոցին պէտք է մանուկի հակման հետ նաև նորա ընդունակութիւնն աչքի առջև ունենալ, իսկ այդ բանի նկատմամբ ո՞մ հետ առաւել կարելի էր խորհրդակցել, եթէ ոչ ուսուցչի հետ։

Սակայն ընտանիքն և ուսումնարանը մեզ ի՞նչպես պետք է այդպիսի հաղորդակցութիւն յառաջ գայ։ Այդ բանի համար որպէս առիթ կարող է ընծայել տան մէջ ուսումնարանական աշխատանքը։ դա միևնոյն ժամանակ մի բազուկ է կազմում, որով ուսումնարանը շարունակ ընտանիքի հետ հաղորդակցութեան մէջ է մնում, և միւս կողմից էլ դա ընտանիքին յարմար առիթ է տալիս ուսումնարանի ուսուցման ընթացքի վերայ մի հայեացք ձգելու, ուստի այդպիսով հնարաւոր է դառնում ընտանիքի և ուսումնարանի փոխադարձ յարաբերութիւնը։

Ընտանիքը այդ աշխատանքի պատրաստելու վերայ պիտի վերահսկէ և ուշք դարձնէ, որ ուսումնարանի տուած կանոնների համաձայն կատարուի։

Ուսումնարանը պարտաւոր է ընտանիքին ծանօթացնել այդ պահանջների մասին և նրանց նրա օգտաւէտութեան, պաղաքարութեան և անհրաժեշտութեան մէջ համոզել։

Դարձեալ ընտանիքը պիտի նկատի, թէ մանուկները այդ աշխատանքներն հաճութեամբ թէ տհաճութեամբ են կատարում, արդեօք այդ շատ ծանր է թէ շատ թեթև, գիտակցաբար են կատարում թէ մեքենայաբար։ Ահա այս բոլոր դիտողութիւնները ընտանիքը ուսուցչին պիտի հաղորդէ, իսկ դա այդ բաները ոչ թէ միայն հաճութեամբ պիտի լսէ, այլ և պիտի դնահատէ. և եթէ դա դիտած չարիքներն բացատրէս ուսումնարանի միջոցաւ հեռացնել չէ կարողանում, հարկաւոր է որ այդ բանը հեռացնելու միջոցների մասին ծնողների հետ խորհրդակցի։

Որպէս զի ընտանիքի և ուսումնարանի մէջ մի հասկացողութիւն կայանայ, հարկաւոր է որ ուսուցիչը դրաւոր տեղեկութիւններ տայ ծնողներին, դրանց մէջ առաջին տեղը բռնումն վերջամնայ կամ տարեկան վկայականները, որոնք ոչ թէ միայն աշակերտների յառաջադիմութեան մասին դիտութիւնների մէջ, այլ և նրանց վարքի, կանոնաւորութեան և ուսումնարանը շարունակ այցելելու կամ չայցելելու մասին որոշ գաղափար են տալիս։ Մի այդպիսի վկայական, ոչ թէ վերին վերջ մի վճիռ է այլ երկար քննադատութեան և կշռադատութեան մի հետևանք, որին ուսումնարանական կեանքի երկար ժամանակեայ դիտողութիւնները և փորձառութիւնները իրեև հիմունք ծառայում են։ Դա ունի մի պաշտօնական և շատ նշանաւոր բնաւորութիւն ուստի ոչ թէ միայն ծնողներին մի գաղափար պիտի տայ իրանց զաւակների հոգեկան դրութեան մասին, այլ և միևնոյն ժամանակ դա մանուկներին մի առաջնորդ և ուղղիչ է լինում, որով նոքա իրանց մասին ինքեանք ևս ճիշտ վճիռ են իմանում։ Ծնողների պարտաւորութիւն է նաև, որ ոչ թէ միայն իրանց զաւակների վկայականների մասին տեղեկանան, այլ և դրա նկատմամբ պիտի աշխատեն մանուկների վերայ ներգործել և դրա համար դարձեալ մեզ մասին ուսուցչի հետ խորհրդակցել։

Բացի այդ ուսումնարանական վկայականից, ուսումնարանը պարտաւոր է նաև ծնողներին մանուկների արած նշանաւոր անկանոնութիւնների ուսման և վարքի վերաբերմամբ գրաւոր հաղորդել, սոյնպէս և ծնողներն իրանց զա-

սակներէ վարքի մասին ուսումնարանէն դուրս պարտաւոր են ուսուցիչներին տեղեկութիւն տալ, որպէս զի երկուսն ալ իմիասին ձեռք ձեռքի տուած աշխատեն ամեն տեսակ անյարմարութիւններ հեռացնել։

Ծնողներն ու ուսուցիչները պէտք է շատ անգամ անձամբ միմեանց հետ տեսնուին, որին առիթ կարող է լինել, ուսումնարանի մօնած մօնեցին որոնք մանկավարժական մեծ նշանակութիւն ունին։ Սովորական աշխատանքի տեղերը մի հանրիսաւոր և զարդարուած տարածութեան վերածելով, ինքնըստինքեան մանուկների վերայ մի ուրախ տպաւորութիւն է թողնում. մանաւանդ երբ նոքա մօնի հանդերձներով են երեւում և ուսուցիչը հանդիսաւոր ձայնով սկսում է նրանց մօնի նշանակութիւնը բացատրել, իսկ նոքա երգարաններ ձեռին այդ մօնին յարմար երգեր են երգում, այն ժամանակ նրանց սիրտը ուրախութեամբ լցւում է և հոգին ստանում է մի անչնչելի տպաւորութիւն. և ահա դրանով աճում է նրանց սէրը ոչ թէ միայն առ ուսումնարանն այլ և առ ուսուցիչն։ Միևնոյն տրամադրութեան են ենթարկվում նաև ծնողներն եթէ որ այդպիսի մօներին մասնակցել կարողանում են։

Պրկեթէ միևնոյն ընաւորութիւն ունի նոյնպէս բոլոր դաստարանների աշակերտների միասին զբօսնուլն. այդ միջոցին իւրաքանչիւր ուսուցիչ ճաշից յետոյ դիվերսիկ եղանակին առնում է մի խումբ աշակերտներ և ծնողների մասնակցութեամբ բաց երկնքի տակ զբօսնում է։ Այդ տեսակ զբօսանքներն ոչ թէ միայն յարմար դէպքեր են տալիս հայրենագիտութեան և բնագիտութեան ուսուցումն հարստացնելու, այլ և զարթեցնում են մանուկների մէջ միտք և հասկացողութիւն բնութեան տեղեկութիւնների և երևոյթների համար, նա և ցանկութիւն և ուրախութիւն միասնական խաղի համար բաց երկնքի տակ ևս առաւել բարձրացնում են։ Այդպիսի դաստարանական զբօսանքներ պէտք է տարուայ տաք եղանակին կատարուին և այն ևս առնուազն ամիսը մի անգամ։

Եթէ ուսուցիչը հասկանում է յարմար խաղեր սարքել և առաջնորդել ծնողներին ևս միևնոյն դերը տալով ինչ որ ինքն անում է, և կամ թէ այնպէս անէ որ ծնողներին հաճոյք պատճառէ իւր սարքած խաղերով, այն ժամանակ նա ոչ թէ միայն սէր և վստահութիւն իւր աշակերտներից և ծնողներից կը վայելէ, այլ և ընտանիքի և ուսումնարանի մէջ մի կապ կը հաստատի, որ նորա դաստիարակչական գործունէութիւնը կը թեթևացնի և միևնոյն ժամանակ կարագացնի։

Սակայն ծնողներն և ուսուցիչներն դաստիարակութեան գործի մէջ մի ընդհանուր հասկացողութիւն ի գլուխ բերելու համար պէտք է փոխադարձաբար միմեանց մտնեն. կարծիք չկայ որ այդ դէպքում ամենամեծ պարտաւորութիւնը ընկնում է ծնողներին, որովհետև մանուկները նրանց են պատկանում, և նրանց բարեկեցութեան մասին անմիջական հոգս տանողներ նրանք են. թէ նորա պատժական դէպքերում և այլ հանգամանքներում իսկոյն նշանակեալ կատարութեան են դիմում, այդ շատ սխալ է. նոքա նախ իրանց զաւակներին ուսուցանող ուսուցչին պիտի դիմեն, նրա հետ խո-

սակցեն մուրթ կէտերը պարզեն, և եթէ այդ անհնարին կամ անպտուղ մնայ, այն ժամանակ կարող են նոքա ուրիշ քայլ անել։

Սակայն ուսուցիչն ևս պիտի շատ անգամ այն ընտանիքները որոնի, որից մանուկներ է ստացել դաստիարակութեան համար, դորանով նա հանգամանքից օգուտ է քաղում մինչդոյն ժամանակ մի ակնարկ ընտանեկան կեանքի վերայ ձգելու, որը նորան մանուկներին դատելու և քննելու համար շատ կարևոր է։ Գիւղերում և փոքր քաղաքներում այդ տեսակ այցելութիւններ շատ հեշտութեամբ կըկատարուին, իսկ մեծ քաղաքներումն այդ բաւական մեծ դժուարութիւն է ներկայացնում։ Սակայն, եթէ մի քանի ուսուցիչներ իմանային, թէ ինչպէս ծնողների հետ բարեկամաբար խօսելով իրանց կոչումը թեթևացնում և գործունէութիւնն բարձրացնում են, այն ժամանակ նոքա ոչ փոքր աշխատանքից կըվախենային և ոչ էլ իրանց պաշտօնական դիրքի մասին սխալ կարծիք ունենալուց կը դանդաղէին՝ ինքեանք այդ բանի համար առիթ տալով։

Ընտանիքի և ուսումնարանի մէջ մի ներքին կապ կարող է հաստատուել, եթէ ուսուցիչը մի ժողովրդական գրադարան հիմնած ունի և դրանով համայնքի զարգացման նպաստում և առաջնորդում է, եթէ նա իւր աշակերտների ծնողների հետ միասին մի այնպիսի օրագիր է կարդում, որն դաստիարակութեան վերաբերեալ հարցեր է պարզաբանում, եթէ նա երբեմն իւր շրջս կողմը ծնողներին հաւաքում և նրանց դաստիարակութեան մասին դասախօսութիւններ է կարդում, կարդացածը մեկնում է, սովորական հարցեր առաջարկում և այդպիսով վիճաբանութեան առիթ է լինում, որին բոլոր անդամները մասամբ հարցնելով և մասամբ ևս պատասխանելով մասնակից են լինում։ Ուսումնարանի համայնքի անդամների մի այդպիսի փոխադարձ մտքերի փոխանակութիւն միմեանց մէջ և ուսուցչի հետ կարող է շատ բարերար հետևանքներ ունենալ։

Լաւ կանէ ուսուցիչը, եթէ նա իւր ուսումնարանի համայնքի մէջ պատահած ընտանեկան դէպքերին մասնակից լինի, լինի դա թէ ուրախութիւն և թէ տրտմութիւն. այդպիսով նա ընտանիքին առաւել մօտենում է և նրա վստահութիւնն ու սէրը ձեռք է բերում, իսկ եթէ նա այդ ունի, այն ժամանակ նա իւր ապագայ գործունէութեան համար մի մեծ պատուար է ունենում։

Այսպէս, կեանքը ուշադրութեամբ և հետաքրքրութեամբ ընդողների և մատաղ սերնդի բարեացակամների համար բազմաթիւ դէպքեր կան ուսումնարանի և ընտանիքի մէջ հասկացողութիւն և համաձայնութիւն իւ գլուխ բերելու համար, ուստի ոչ մի դաստիարակ չըպիտի դանդաղի իրան հանդիպող յարմար դէպքերից օգուտ քաղելու, նա դրանից շատ բարիքներ պիտի հնձէ։

Ամեն դէպքում ուսումնարանի և ընտանիքի, դաստիարակութեան երկու գլխաւոր գործիչների մէջ յարաբերութիւնն ամեն ուրեք առաւել սերտ կապ պիտի լինի, քան թէ դա իրապէս կայ, և այդ՝ մեր մատաղ սերնդին

փրկութիւն կըբերէը և դրանով ևս միևնոյն ժամանակ ժողովրդին բարեբաղդութիւն և երջանկութիւն, զի մատաղ սերնդի դաստիարակութիւնից կախումն ունի մի ազգի և հայրենիքի ապագան։

(Թարգմ.) Սարգիս Տ. Գարրիէլեանց։

. . . Հայր Խմբագիր։

Խոստացիր իմ, խոստումն կըկատարեմ։ Առիթ ունենալով շրջել Օսմանեան Հայաստանի մէջ՝ նկատմունքներս դրի կանոնաւոր և իրրև փորձ՝ կուզարկեմ առաջին նամակս, վերաբերեալ Պայազիտու։ Կըշարունակեմ այսուհետև, յոյս ունենալով թէ տպագրելու շնորհը չէիք պղտար։

Ն. Գ.

Նամակ Ա.

1887 Օգոստ. 1. Տրապիզոն։

ՊԱՅԱԶԻՏ *).

Երջանկայիշատակ Նախնեաց միջնաշխարհի կամ Այրարատ Նահանգի քսան գաւառներէն միոյն՝ Կոգովիտ կամ Կոգի այժմեան գլխաւոր քաղաքն է Պայազիտ, որ կըգտնուի մերձ ի Մասիս Թանտրիկ լերան շրջապտոյտ և Շարան քարեր անուանեալ մասերու սիրտը իբր 400 տուն բնակչօք, որոց 180ը Հայ են, մնացեալք՝ Թուրք։ Հայք ունին կանգուն մի եկեղեցի Ս. կարապետ անուամբ կոփածոյ քարով փայտածածք խախուտ և տգեղ տիպարով մը. որոյ երկու դրան չորս արձանագրութիւններն են։

Ա. «Թուին ՌՄԿԶ. Կամօքն Աստուծոյ և սրբոյ Աստուածածնի վերստին նորոգեցաւ Սուրբ Կարապետ եկեղեցիս ի Հայրապետութեան Տեառն Եփրեմի սրբազան կաթուղիկոսին ամենայն Հայոց և մերոյս առաջնորդ Սիմէօն Արքեպիսկոպոսի»։

—

Բ. «Որ և ողորմութեամբն ամենազօրին,
Եւ օժանդակութեամբ սուրբ Աստուածածնին,
Շինեցաւ եկեղեցիս մեր վերստին,
Անուամբ սրբոյ Կարապետին,
Ի պարծանս Հայոց ազգին,

(*) Պայազիտ քաղաքի հնագոյն անունն է Դարօնք· որաքանչիք լինչ կը կոչէին, յայտնի չէ, այժմեան Պայազէտ կոչումն Օսմանցւոց Աւելի առաջ Պայազիտէ անուանէն առնուած է։

Ի վիրկութիւն Հոգւոց նոցին.
Նաև արիւամբք Հատարակաց.
Եւ բարեպաշտօն իշխանաց.
Համայնից է յիշատակ
Մինչև յետին աշխատողաց
Վարձս բարեաց առցէ Աստուած.
Ամենեցուն Հատարակաց
Ի ծոց սորին քահանայից
Տացէ Աստուած խոնարհութիւն
Եւ ի նորոգ եկեղեցիս մեր
Պահեսցէ Տէր Հաստատուն. Թուին 1266 էր ընդ նմին»։

—

Գ. «ՌՄԲ. Թուին յոթ(°).
Էր նախ շինեալ առն մեծի.
Մինաս անուամբ վարդապետի
Ընդ խոհական մեծ իշխանի
Որ Վարդապետ անուամբ յորգի.
Որոց Հոգւոյն Տէր ողորմի
Զոր յիշատակիս մեզ Թողին,
Եւ ներկայ ժամանակս կրկին
Եղև շինումն տաճարիս
ՌՄԼ. Թուականիս,
Զոր համակամ ժողովեցաք
Զեկեղեցիս նոր շինեցաք.
Հիմամբ ի վերայ նորոգեցաք
Հատարակութեան զօժիտս տուաք
Անձամբ մերով աշխատեցաք,
Մինչ ի կատարումն տեսաք,
Ի փառս սուրբ Երրորդութեան
Եւ ի պարծանս Հայկազնեան
Զի սա է դուռն արքայութեան
Որ մտցեն ի սուրբ խորան
Նոքա ելցեն յերկնից կայան
Լսեն ձայն երանական.
Արդ Հայցեցէք ի սուրբ Հոգւոյն
Աշխատողացս Թողութիւն
Եւ համայն ժողովրդոց ննջեցելոց.
Արքայութիւն ամէն։

—

Դ. «ՌՄԲ. Թիւ յոթ(°)
Արդ ի շնորհէ կանխադետին

Նորոգեցաւ կամք փրկչին
Հանդերձ յերկնային կամարին
Տապան կազմեաց
Ի Գէղէրեան (՞) Ս. Տաճարիս
Հեղինակին Տեառն Մինաս Հանգուցեալ վարդապետին,
Եւ այժմ ի նորոյս պատճառն
Ողորմութեամբ Տեառն անձին
Սա շինեցաւ Աստուածոյ տուն զարմանալի
Եւ յոյժ գեղ (՞) զոր տէր պահեսցէ հաստատուն
Մինչև ի կէտ վերջին դուռ ի ծոց սորին ժողովելոց
հասարակացն փրկութիւն։
Քահանայիցղ գաստութիւն, և իշխանաց կարողութիւն,
Մեծամեծաց և ի փոքունց ամենեցուն վարձատրութիւն
Եւ մեծալան աշխատողաց, զողորմութիւն տուողաց
Զ՚իշատակիս կազմողաց տացէ Աստուած վարձս բարեաց »։

Զէնգէզօրի գերեզմանատան մատուռին քակուած մի պատին վերայ միայն « ամէն » բառ մի կերեւի։

Պայազետի Զէնկիզօր կոչուած Հայոց գերեզմանատան իմ տեսած ամենահին գերեզմանաքարի վերայ կայ ՉԻՆ թիւը։

Սոյն եկեղեցիէն զատ կան նաև երկու եկեղեցի կիսաւեր, մին Ծիրանաւոր Ս. Աստուածածնին Շարան Քարերու պատեկին վրայ, որ վերջին պատերազմին քայքայուած է. այս եկեղեցւոյս որմոց վերայ թէև կան արձանագրեր, բայց չեն կարդացուիր, միայն միջին սեղանին և ատազանին վերայ ՌՄԾԹ թուական մը կերեւի, Իսկ միւսն ի գերեզմանատան՝ Ս. Փրկիչ անուամբ, որոյ վերջնոյն մէջ կամիտուի Սմբատի մը շիրիմ, վերջին արեւելեան պատերազմէն առաջ կանգուն մատուռով, որոյ վրան արձանագրուած է եղեր « Սմբատ ապաբաղեւ Հայոց ֆոխաբրեալ յաբեղեան Հայոց », որ թուի ըստ իս Բագրատունի Սմբատներէն միոյն գերեզմանը լինիլ, այժմ սորա հետքն անգամ կորած է, միայն մատուռին քայքայմունք կերեւին։ Ցարգելի է նաև իւր արքատեղի տեղւոյն Հայոց Թուխա—Մանուկ քարը, Գառնիկ աղբիւրը, Պզոյի աւետարանը պարունակող մատուռը, և Ս. Սիմոն եկեղեցին։

Պայազիտ ընդ իշխանութեամբ Կարնոյ կուսակալութեան մի կառավարչութիւն է (միւթէսարըֆ), որ ունի իւր քաղաքական իշխանութեան տակ չորս դեր-կառավարութիւններ (քայմագամ), որք են Գարաքլիսէ, Ալաշկերտ, Անթապ (Ծաղկոտն) և Տիատին (Զարեհաւան)։ Պայազիտ բերդաքաղաք անուանի է իւր արիւնահեղ պատերազմներով և, ընդ մէջ Ուռւաց, Տաճկաց և Պարսից սահմանագլուխ լինելով, իսկ ի հնումն Բագրատունեաց բնակավայր լինելովը, նախ քան զԱրշարունիս փոխադրումը, յոր տանն կանուանուէր Դարոնք կամ Դարունք, ուր ի պատմութենէ գիտեմք, թէ կային ծ-րդ դարուն Բագրատունի թագաւորաց ոմանց գերեզմանք, Պայազիտէն չէ հեռի քրէական յանցաւորաց ապաստանարան Արշակաւանը,

որ այժմ կըգտնուի Մասիսի և Որկովայ լերանց միջավայրը և կըսուի քըրտերէն Խարապայ - Պաժառ, այսինքն աւերակ քաղաք Մեծին—Ներսիսի ա նիծիւք և նախարարաց արշաւանօք աւերակ եղած, յորում անծանօթ է այժմ նախնի Որթք գիւղը։ Պայազիտէն ոչ իսպառ հեռի է նաև Կոգովիտի հին Ճամբուտը (Ջագեանլու), այժմեան Քարա—Պուլախ աղբեր քով, ուր տեղի ունեցաւ Պարսից արքայորդւոյն ու մեր Ատոմմ Մոկացիի պատուա խնդիր միջադէպ վայրի երէկներ որսալու գնացած ժամանակին։

Պայազիտ կըգտնուի ըստ Փարիզեան միջօրէի երկայնութեան 42° իսկ հիւսիսային լայնութեան իբր 39° 50' աստիճանաց ներքև, ըստ որում ամենաերկայն օրն կըլինի 15 ժամ իսկ կարճը 9։ Ունի ամենապատուական ընտիր ջուր, զոր նէրէէթ կոչել պարտէ և յոյժ մաքուր օդ՝ դրացի ալեւոր Մասիսի հարևան լինելուն համար։ Այս բնական տարերց պատուականութեան հետ մէկ տեղ եթէ չըլինէր տանց հակառողջապահական չինութիւնքը, փողոցներու նեղ և կեղտոտ դրութիւնը, տարակոյս չիկայ, որ նախանձելի դիրք մը պիտ ունենար Պայազիտ։ Այս քաղաքի բերքերն են, ցորեն, գարի, խոտ, առւտ, ծիրան, խնձոր, բալ, տանձ, բանջարեղէն, իսկ կենդանիք՝ աղուէս, գայլ, կղնաքիս, վարշակ, ջրշուն, այծեամ և նապաստակ, ունի ծծմբի, պաղպղի և զանազան քարերու հանքեր ալ, բայց անգործածելի։ Ցեղական արհեստներն են. դերձակութիւն, կօշկակարութիւն, ոսկերչութիւն, որմնադրութիւն, հիւսնութիւն, պղնձագործութիւն, դարբնութիւն, հրացանագործութիւն, սափրիչութիւն, ներկարարութիւն, խանութպանութիւն, ամէնքը Հայոց ձեռք, իսկ մսավաճառութիւն, նպարավաճառութիւն, եղնապանութիւն և կառավարական պաշտօնէութիւն թրքաց ձեռք։ Ցեղոյն հայ ժողովրդեան գլխաւոր ապրուստի միջոցներն են մեծաւ մասամբ վաշխառութիւն և ոչխարաբուծութիւն, առևտրականութիւնը յետագէմ վիճակի մէջ է առաջին՝ Գարա - Քիլիսէի և Թաշլի Ձայի մէջ ընդարձակ վաճառանոցներ հաստատելուն համար, իսկ երկրորդ՝ քաղաքն ո և է ճանապարհի վերայ չինուած չըլինելուն համար, այնպէս որ, ոչ մի կարաւանի անց ու դարձէն չօգտուիր ըստ որում ժողովրդեան նիւթական վիճակն կարևկեալ է։ Անուանի են Հայերէն Մանուկեան, Քրմոյեան, Դանիէլեան և Տրմիեան գերդաստունք իրենց հարստութեամբ, քաղաքական ազդեցութեամբ և գործունէութեամբ։ Հայ երիտասարդութեան մէջ պակաս չեն արժանաւոր յաջորդներ, որք այժմէն կըփայլեն գովելի ձիրքերով և ի պաշտօնատանն տիրող կառավարութեան ստանձնած պաշտօններուն անթերի կատարմամբ։ Ուղղակի Պայազէտի վարչութեան պատկանող Հայ գիւղօրայք են — Արծափ 50 տուն քնակչօք, Քսրուն 20 տուն, Մուսուն 25 և Սարըպեղ կամ Սարիաւ 10 տուն, որոնք կապրին երկրագործութեամբ, բայց վիճակին գոհացուցիչ և հանգիստ է։ Պայազիտ ունի երեք բերդ, որոցմէ հնագոյնը երեսէ ձգուած է, Սուրբ վըլտատակաց մէջ շրջելով տեսայ պահապանի սենեկին պատուհանի աջ կողմը քարի մը վրայ մի հայ արձանագրութիւն, որ գ՛ես և ճ՛ թուականը մի-

այն ինձ ընթեռնլի եղաւ. այս բերդին վրայ նոր լացուած դուռ մը կայ որոյ կողերը կան երկու վինալարդ կոտոց պատկերներ սաղաւարտ ի գլուխ բազկատարած կանգնած իրր ազօթող, որոյ միոյն քովն ալ կայ այծեամ, սոյն բերդին մէջ ցոյց կըտրուի մեզ Ս. Գրիգոր անուամբ մի հայ եկեղեցւոյ աւերակք. սոյն եկեղեցւոյ քովի լճին ջուրն ցարդ կըծառայէ ջերմուռանդ ուխտաւորաց ի բժշկութիւն. երկրորդ բերդն կըսուի Զէնկիզօրի բերդ, յորում ոչ բնակութիւն կայ և ոչ ալ չենք կամ հետազօտելի ինչ, կըգտնուի քաղաքին պաղոտային առջև իրր կէս ժամ հեռու. Երրորդ բերդն կըգտնուի քաղաքին քամակը Անտօնի—Դար կոչուած բարձրաւանդակին վրայ, ուր է վինուորանոցը, կեդր. բանտը, հիւանդանոցը, ուղամմերանոցը, փուռը, բաղանիքը, աղօթատեղին, արմտեաց շտեմարանը և ջրոց աղբիւրք, գործ Հոյակապ և ամրակուռ քարով կերտուած Պայազիտի նախկին աւատապետ Փահլիւլ փաշայի նախնեաց յիշատակ. Պայազիտ զօրաց բաղանիքէն զատ ունի մի բաղանիք ևս հասարակութեան համար և մի պանդոկ ուղևորաց. Սոյն քաղաքի բնակչաց թիւն վերջին պատերազմէն առաջ կըյանգէր 1500 տան, որոց բնակավայրք այժմ տխուր կերևին և իրենք գաղթած են Ռուսաստանի, Պարսկաստանի և Թրքաստանի այլ և այլ քաղաքները, քաղաքն Համայն Ապրիկոր, Բիրդ, Նոր և Փլանլի անուամբ չորս թաղերէ կըբաղկանայ ուր խառն կըբնակեն Հայք ընդ Թրքաց լաւ յարաբերութեամբ, շնորհիւ տեղւոյն կառավարիչ Վսեմ. Քեազիմ փաշային արիւն կառավարութեան. Պայազիտի ժողովրդեան խօսակցութիւնն է ռնգային, կազմութիւնն՝ առոյգ, անդամազնիօրէն՝ միջահասակ, թխագոյն. Գովելի է իգական սեռին հաչկական համեստութիւնը, իսկ պարսաւելի արականին առ եկեղեցիս ունեցած սառնութիւնը, այնպէս որ Կիւրակէ օրեր իսկ հազիւ հազ կարելի է 10 անձ գտնել Աստուծոյ հրապարակաւ փառաբանող, որուն շատ բաներ պարտինք. Ժողովրդեան թէ կանանց և թէ արանց զգեստն ալ Պարսկաձև և Ռուսաձև է, իսկ լեզուներն տարբեր թէ Տաճկահայերէն և թէ Ռուսահայերէն, այնպէս որ մինչ Ռուսահայն միավանկ բայերու ներկան է կըծորդէ է-ով, լ-ով և ս-ով, է-ո՜ւ, լ-ո՜ւ, ս-ո՜ւ, և այլն, և մինչ Թրքահայն սեռի խնդիրներ կըգործածէ հայցականով, սոքա սեռականն ունին ի գործածութիւն ընդհանրապէս *).

Աղէ. Լըբլ-ին։ — Այս մասին խօսելով տեղացի հայք չունին ոչ մի սահմանագրական ժողով. ունին միայն մի Առաջնորդ՝ որ կըմնայ Իւչքիլիսէի կամ Բագրեւանդայ Ս. Յովհաննու վանքը և է Տ. Յովհաննէս Եպիսկոպոս Տէր Աստուածատուրեան, տեղւոյն հանգամանքը գիտցող մարդասէր

(*) Աւանդեցուցաց եւ ընդունողաց բարբառը Արարատեան բարբառի հետևվումն եւ խոնարհումն ունի սակաւ տարբերութեամբ եւ կոշտ արտասանութեամբ. է տառը ողորթաբար ի են հնչում. զօր. հաց ասելու տեղ՝ խաց են ասում՝ եւ բայերի սահ. ներկայի գործածութիւնը խօսակցութեան մէջ նկատելի է նորանում՝ որ օժանդակ բայը բոլի թէ սկզբումն եւ թէ վերջումն կրկնվում. զօր. խաց եմ ուտում, էդ ուր ես գնում, տուն եմ չենում, ինչ ես ասում՝ Ս. Ալիշ.

և կարելի եղածէն աւելի գործող մի մարդ։ Կայ նաև մի երեցփոխան՝ որ կը հսկէ եկեղեցական եկամտից ու այլ մասերուն՝ եկեղեցւոյ միակ երէցին հետ։ Պայազիտի Գեր. Առաքնորդ Ս. Հօր և ազնիւ ժողովրդեան կրթասիրութեան արդիւնք է Միաց. ընկերութեանց բարձրագոյն վարժարանը յաուալաձէմ՝ քան զՐուշտիչէս Թրքաց, որ բացուած է 2½ տարիէ ի վեր, ուր կուսանին 80 ի մօտ մանկտիք երեք ուսուցչաց հոգատարութեան տակ։

Նորայր Քալճեան.

ԱԶԳԱՅԻՆ

Ա Զ Դ

ԳՈՐԾԱԴԻՐ—ՄՆԱՑՈՒՆ ԾԱՆՉՆԱԾՈՂՈՎՈՑ ԿՏԱԿԻՆ ԾՈՎՍԵՓԱՑ ԻՋՄԻՐԵԱՆՑ.

Սահակ — Մեսրոպեան Գրական Մրցանաբաշխութիւնն՝ որ բարեյիշատակ Ծովսէփ Իզմիրեանցի կողմէ հաստատուած է, սիրոի կատարի յառաջիկայ 1888 տարուոյ Սրբոց Թարգմանչաց տօնի օրն։ Հետևապէս Գործադիր-Մնայուն Ժողովն կը փութայ հրաւիրել այն հեղինակներն՝ որ ունին ազգային ղեզուաբանութեան (ֆիլօլօգի) և պատմութեան վերաբերեալ երկասիրութիւններ ձեռագիր կամ տպագիր, և կը փափաքին մասնակցել մրցանակաբաշխութեան, փութան յայտարկել զայնս առ Աւետն. Սրբազան Պատրիարքը Հայրն ի Կոստանդնուպոլիս, մինչև յառաջիկայ Ցունվարի սկիզբն։

Տպագիր երկասիրութիւնք հարկ է որ երեք օրինակ յայտարկուին։

ՊԱՋՏՕՆԱԿԱՆՔ.

(ՅՕՐԱԴՐՈՒԹԱՆՑ ԱՒՆՕԴԻ).

ՎԱՐՉԱԿԱՆՔ.

1 Ցունիսի. Սինօդը որոշեց Գեր. Թադէոս եպիսկոպոս Տէր Դանիէլեանին արձակելով Տաթևու փոխանորդութիւնից՝ ուղարկել Գանձասարու վանքը ի միաբանակցութիւն. Գանձակի փոխանորդ Արժ. Անանիա վարդապետ Համազասպեանին նշանակել Տաթևու վանահայր, կալուածոց կառավարիչ և վիճակի փոխանորդ, իսկ Երիզորիս վարդապետ Տէր Յակովբեանին՝ կարգել Գանձակու փոխանորդ։

—

1 Ցունիսի. Սինօդը որոշեց Նոր-Նախիջ. փոխանորդ Արժ. Գարեգին վարդա-

պետ Սահակեանցին Վեհափառ Հայրապետի կանխագոյն հաճութեան համեմատ կարգել Նոր–Նախիջևանու փոխանորդ։

—

5· Յունիսի· Սինոդը որոշեց պատուիրել բոլոր հոգևոր ատեաններին և պաշտօնական անձանց, որ ատեանները մատնագին և աթոռային ուրիշ դրամներ ուղարկելիս՝ փոստի ծախքը նոյն դրամներից չը հանեն, այլ վճռակային արդիւնքից հոգան· իսկ գործակալները փոստային և այլ ծախքերը հոգան ի հաշիւ այն անձինքների՝ որոնցից ստացել են դրամները և կամ մերձաւոր Հոգևոր Կառավարութեան կամ Կոնսիստորեային յանձնեն դրամները Էջմիածին ուղարկելու ամբողջութեամբ՝ դարձեալ ի հաշիւ վճռակային արդեանց· զանցառուքը իրանց սեպհականութենից կըպարտաւորուին տուժել։

—

10 Յունիսի· Սինոդը ըստ կոնդակի Վեհափառ Կաթուղիկոսի որոշեց Սինոդի անդամ Գեր· Սուքիաս եպիսկոպոսին կարգել Երևանայ վիճակի փոխանորդ պատուիրելով իւր այս տնօրէնութեան մասին հրատարակել և արարատ ամսագրում ի գիտութիւն Հոգևոր Կառավարութեանց և այլ պաշտօնէից։

—

12 Յունիս· Նորքեցի Հանգուցեալ մահտեսի Սիրադուխտ Ներսիսեանց նախքան իւր մահը վկայից ներկայութեամբ իւր կտակիմէջ 500 րուբլի յատկացնումէ տեղւոյն Ս. Հոգևկաթեան օրիորդաց դպրոցին, ա կարգի երկու խաղարկութեան տոմսակներ՝ տեղւոյն եկեղեցւոյն իբրև անձեռնմխելի գումար· 100 րուբլի ևս Մայր Տաճարի վերաշինութեան· Կտակակատար Գրիգոր Ամիրեանց կտակի հետ ներկայացնելով կտակեալ մի հարիւր րուբլին ի նպաստ վերաշինութեան Մայր տաճարի՝ խնդրումէ յիշեալ կնոջն ամփոփել տեղւոյն եկեղեցւոյ գաւթում· Սինոդը որոշեց թոյլ տալ թաղել յիշեալ կինը եկեղեցւոյ գաւթում՝ կտակի իսկականը պահել Սինոդում իսկ պատճէնը յանձնել կտակակատարին՝ Երևանայ գործակալի միջոցաւ, պատուիրել գանձապահին յիշեալ մի հարիւր րուբլի նուէրը գրել աթոռային արդեանց տումարում։

—

15 Յունիսի· Սինոդը որոշեց շրջաբերական հրամանով պատուիրել Կոնսիստորիաններին որ նորա քահանայից կամ այլ հոգևորականաց ձեռնադրութեան համար առաջարկութեանց մէջ ճիշտ տեղեկութիւններ մէջ բերեն, թէ ձեռնադրելին քանի տուն ծուխ պիտի ունենայ, քաղաքը կամ գիւղը որի վերայ ձեռնադրուելու է քանի՞ քահանայ, սարկաւագ և դպիր ունի, առաջարկուածը ի՞նչ ծագումից է (ազատ թէ հարկատու), եթէ ազատ կամ հոգևորական է՝ պրաւոր ապացոյցները առաջարկեն, եթէ հարկատու է՝ արձակմանը՝ ձննդական և ուսման վկայականով, հարցաքննական թերթերով և քահանայացուին առանց հարկ պահանջելու մի մի չարէք հող յատկացնելու շինական համախոսական վճռով, այլ և պարտաւորական ստորագրութիւն՝ որ ձեռնադրելիքները մինչև մահ մնան այն տեղ՝ որի վերայ

ձեռնադրվումն. յաւելացնելով միանգամայն իրրև մերձաւոր ատենատուի իրանց դիտողութիւնը թէ կարօտութիւն կայ կամ ոչ, և թէ, պէտք է կամ ոչ ընդունել կամ՝ ձեռնադրել առաջարկուածը։

—

17 Յունիսի. Սինօդը Գանձակու Հոգ. կառավարութիւնից ստանալով երկու հարիւր իննսուն և ութ րուբլի քառասուն և երեք կօպեկ նուէրը Գանձակեցի Իսահակեան Աբրահամ, Համբարձում, Յովհաննէս և Արտաշէս եղբայրներից՝ իրանց հօր յիշատակի համար, որոշեց պատուիրել Գանձասպահին Երուսաղէմայ 100 րուբլին գրել աւանդից մատենում, իսկ ձեմարանի 198 րուբլի 43 կօպեկը՝ աթոռային արդեանց տումարում և յիշեալ եղբարցը օրհնութեան թուղթ ուղարկելով ինչպէս այս՝ նոյնպէս և այլ նուիրատուութիւնները հրատարակել Արարատ ամսագրում։ Իրանց հանգուցեալ Աւագ հօր կտակին համեմատ երկու հազար րուբլի նուէրը բաշխուած է ըստ այսմ։

1. Գանձակայ Սուրբ Յովհաննէս եկեղեցու շինութեան 500 րուբլի. 2. Ս. Յովհաննէս Եկեղեցւոյ մօտ շինուելիք աւազանին՝ 500 րուբլի, 3. նոյն քաղաքի Աղքատանոցին 200 րուբլի. 4. Մայր Աթոռոյս ձեմարանին՝ 200 րուբլի. 5. Երուսաղէմայ Ս. Յակովբեանց վանաց՝ 100 րուբլի, 6. Գանձակայ երկուց սեռից Հոգ. Ծխական ուսումնարանաց՝ 500 րուբ.

—

29 Յունիսի. Սինօդը Ալէքսանդրապօլու Հոգ. կառավարութիւնից ստանալով 10 րուբլի հոգեբաժին Հանգուցեալ օրիորդ Տիրուհւոյ Դրամբեանց որոշեց պատուիրել Գանձասպահին գրել աթոռային արդեանց տումարում՝ մուտք, և հրատարակել Արարատ ամսագրում ինչպէս այս՝ նոյնպէս ի յիշատակ հանգուցելոյն՝ նորա եղբօր՝ Պ. Գրիգոր Բաղդասարեան Դրամբեանի այլ նուիրատուութեանց մասին՝ որք են. մի մի հարիւր րուբլի՝ Ալէքսանդրապօլու Սահակեանոյշեան դպրոցին, Աղքատանոցին և Ս. Նշան եկեղեցւոյ նոր շինելի կամուրջին։

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ.

5. Յունիսի, Սինօդը որոշեց Բադալ—Բաշինակ-ոյ Էմմանուէլ քահանայ Ահարոնեանցին կարգալոյծ անելով դասել ի թիւս աշխարհականաց, նորա՝ ընդհատական աստիճանում պսակներ կատարած լինելուն համար. և ապօրինաբար կատարած պսակների համար ստացած 650 րուբլի դրամների երկպատիկը ստանալով յատկացնել Աստրախանայ թեմի Հոգևոր. որբոց և այրեաց գանձանակին, իսկ պսակները որոնք կատարուած են չորս և հինգ աստիճանում չընդհատութեամբ՝ համարել անվաւեր, (Հրատարակել Արարատ ամսագրով ի խրատ և ի զգուշութիւն այլոց)։

—

12 Յունիսի. Սինօդը վաւերացրեց Թիֆլիզի Կենսխստորիայի որոշումը, որով Ալաշկերտ գործակալ Մեսրոպ քահանայ Եդիկեանցը արձակուելով գործակալութիւնից ենթարկուում էր խիստ յանդիմանութեան և 30 րուբլի տուգանքի՝ ընդհանուր աստիճանում պակի հրաման տալուն համար։

—

15 Յունիսի. Սինօդը ճանաչելով յանցաւոր Տաթեւու վիճակից 1. Ղաղաթ գիւղի Եսայի քահանային՝ առանց օրինական թոյլատուութեան պակ կատարելուն համար, 2. Սիսիանու գործակալ Կիրակոս քահանային՝ առանց օրինաւոր տեղեկութեան՝ թէև յանգէտս, արդէն պսակեալը նորից ուրիշի վերայ պսակելու հրաման տալու համար. 3. Ալէլու գիւղի Մկրտիչ քահանային, որ լսելով հանդերձ գործակալի բերանացի հրամանը չըպսակել արդէն պսակեալը թէև հրաման տուած է անգիտութեամբ. 4. Լծենու Աստուածատուր քահանային՝ որ պատահմամբ Ալէլու գիւղում հանդիպելով գործակալի հրամանի վերայ Մկրտիչ քահանայի մակագրական յանձնարարութեան համաձայն՝ արդէն պսակեալը յանգէտս նորից պսակում է չորեքշաբթի օր՝ որ օրինօք արգելուած է. 5. Տաթեւու Հոգևոր Կառավարութեան փոխանորդին, անդամներին ու քարտուղարին՝ առանց վիճակային իշխանութեան կանխագոյն յանձնարարութեան գործի այդ քննութեանը միջամուխ լինելուն համար, որով աւելի ևս խճճուել է գործը և քաղաքական կերպարանք առել. և 6. կրկնապսակ կնոջ սկեսրայրին ու հօրը՝ որոնք միմեանցից ծածուկ բաշխըղ ստանալով պսակել են տուել իւրաքանչիւրը իր կամեցած մարդու վերայ, որով և պատճառ են եղել այս տեսակ օրինազանցութեան. Սինօդը որոշեց, 1. կրկնապսակի առաջին պսակը համարել վաւերական թէև մարձաւոր իշխանութեան հրաման չէ եղած, 2. երկրորդ պսակը համարել անվաւեր, իսկ ապօրինաբար պսակուած մարդուն վեց ամսեայ եկեղեցական ապաշխարութեան ենթարկելուց յետոյ՝ թոյլ տալ ուրիշի հետ ամուսնանալու. 3. երկու պսակադիր քահանաներին էլ զգաստացնել քահանայութիւնից, առաջին պսակը օրհնող Ղաղաթու Եսայի քահանային և երկրորդ պսակ օրհնող Լծենեցի Աստուածատուր քահանային վեց ամսեայ ապաշխարանքի ենթարկել տեղական եկեղեցւոյ դրանը կանգնեցնելով և 25 ական րուբլի տուգանք ստանալով յօգուտ Երևանայ թեմի հոգևորականաց որբոց և այրեաց. 4 Սիսիանու գործակալ Կիրակոս քահանայ Անանեանցին իբրև անգործունեայ ոք և զանցառու իր իսկական պարտաւորութեանը՝ հրաժարեցնելով գործակալութիւնից դադարեցնել նաև քահանայութիւնից և ենթարկել 8 ամսեայ ապաշխարանքի տեղական եկեղեցւոյ դրանը կանգնեցնելով և յօգուտ Երևանայ թեմի հոգևորականաց որբոց և այրեաց 30 րուբլի տուգանք պահանջելով. 5. Ալէլու գիւղի ծխական Մկրտիչ քահանային դադարեցնել քահանայութիւնից և երեք ամսեայ եկեղեցական ապաշխարանքի ենթարկել 20 րուբլի ևս տուգանք պահանջելով դարձեալ յօգուտ որբոց և այրեաց հոգևորականաց Երևանայ թեմի. 6. Տաթեւու փոխանորդ Յովհաննէս Վարդապետի դատը՝ նորա մահուան պատճառով թողնել Աստուծոյ անաչառ դատաստանին, իսկ Տաթեւու Հոգևոր Կառավարութեան անդամներին ու քարտուղարին՝ թէև պէտք էր արձակել պաշտօնից, բայց այս անգամ խիստ յանդիմանութիւն անել նոր փոխանորդ նշանակուած Անանիա վարդապետի միջոցաւ Կառավարութեան Աստենով, ազդելով միանգամայն որ եթէ կրկնուի այսպիսի դէպք՝ ոչ միայն կարձակուին պաշտօնից, այլ և խստագոյն պատժի կենթարկուեն. 7. կրկնապսակ կնոջ սկեսրայրին և հօրը միմեանցից ծածուկ բաշխըղ առնելուն և ամեն մինը իր կամեցած մարդու վերայ պսակել տալուն համար ենթարկել երեք ամսեայ եկեղեցական ապաշխարութեան տեղական եկեղեցւոյ դրանը կանգնեցնելով։ (Հրատարակել պատուիրուած է. բարատ ամնագրում՝ ի խրատ և ի զգուշութիւն այլոց)։

—

15 Յունիսի. Սարդարապատու գաւառի գործակալ և Սարդարապատ գիւղի ծխական Յուսիկ քահանայ Սարգսեանին անհաւատարիմ ծառայութեան համար Սինօդը որոշեց արձակել պաշտօնից, և դադարեցնելով քահանայական գործունէութիւնից ենթարկել երկամեայ ապաշխարութեան տեղւոյն եկեղեցւոյ դռանը առանց փիլոնի Սաղմոսը ձեռքին կանգնելով. այլ և որոշեց գալեալ դրամների կրկնապատիկը պահանջել։

—

17 Յունիսի. Սինօդը վաւերացրեց Շուշւոյ Կոնսիստորիայի որոշումը, որով իրանց անկարգութեան համար պատժի են ենթարկվում նոյն քաղաքի Վերին Թաղի եկեղեցւոյ քահանայքը որք են Խաչատուր, Դանիել և Սահակ ըստ այսմ. Դանիել քահանան առանց փիլոնի մի տարի ժամանակով եկեղեցւոյ դռանը ապաշխարելուց յետոյ պէտք է ուղարկուի Կարկաժան գիւղը, որի վերայ ձեռնադրուած է. անզաւակ և այրի Սահակ քահանայ Մահմուրեանցը մինչև իւր կենաց վերջը պէտք է Թողնուի վիճակի վանքերից մէկում. իսկ Խաչատուր քահանայ Ղարաքէկեանը երեք ամսով եկեղեցւոյ դռանը ապաշխարեցնելուց յետոյ, ծերութեանը յանձնելով Թոյլ պիտի տրուի քահանայութիւն անելու։ (Պատուիրուած է հրատարակել Ընթրատ ամսագրում ի խրատ և ի զգուշութիւն այլոց)։

—

26 Յունիսի. Սինօդը վաւերացրեց Շամախւոյ Կոնսիստորիայի որոշումը, որով Գիւրը գիւղի Մեսրոպ քահանայ Տ. Սարգսեանցը կարգալոյծ է լինում զանազան զեղծմանց և ընդհանուր ատելութեան պատճառ օրինական թոյլտուութեան պատճառելուն համար։

—

26 Յունիսի. Սինօդը որոշեց Նոր—Արմաւիրայ Ծարութիւն քահանայ Խաչերեսեանին նորա զանազան զեղծմանց համար կարգալոյծ անել գրելով ի Թիւս սուրբ աշխարհականաց։ (պատուիրելով ի խրատ և ի զգուշութիւն այլոց՝ հրատարակել Արարատ ամսագրում)։

ԴՊՐՈՑԱԿԱՆՔ։

24. Յունիսի Սինօդը որոշեց գրել Ն. Պօլսոյ պատրիարք Ամեն. Ծարութիւն Արքեպիսկոպոսին, Թիֆլիզի առաջնորդ Գեր. Արիստակէս եպիսկոպոսին. Նոր Նախիջեւանու Հոգևոր Կառավարութեան և Արցախու Թեմակալին՝ որ Ճեմարանի համար աշակերտներ ուղարկեն. որոնք պէտք է լինին ուշիմ, երկարօրգի, ձայնեղ, քաջաւուրջ, և առանց մարմնական արատների և որոնք պէտք են քննուին ծխական դպրոցների ծրագրին համեմատ, բացի լսարաններից, ուր մտնելու համար պէտք միայն գլխաւոր առարկաներից քննուին։ Գ. դասարան մտնողները պէտք են լինին 14—16 տարեկան Դ. դասարան մտնողները՝ 15—17 տարեկան։ Աշակերտները պիտի ընդունուին

Թիֆլիզի Թեմից՝ 12 հատ որոնցից պատրաստ պիտի լինին մտնելու վեցը՝ Գ. դասարան, երեքը Դ. դասարան և երեքը Ներսիսեան դպրոցը ապարտաղնեցից՝ Ա. լսարան։

Նոր Նախիջեւանի վիճակից՝ 8 աշակերտ 3 հատը՝ Գ դասարանի համար, 3 ը Դ. դասարանի, և 2 Ա. լսարանի համար։

Արցախու Թեմից՝ վեց աշակերտ 3 ը Գ. դասարանի և 3 ը Դ. դասարանի համար։

Տաճկաստանի վիճակներից, առաւելապէս՝ Մշոյ, Երզնկայի, Տրապիզոնի, Սերաստիոյ Ամասիոյ, Ակնայ, Արաբկերի, Խարբերդի Տիգրանակերտի, Ուրհայի, Կիլիկիոյ և Ռումանիոյ վիճակներից՝ 12 աշակերտ։